№ 82 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 18

1908

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 18 № 82

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ապրիլ 15-ի երեկոյեան, կարճատև հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԱՅՐԻ

ԿԱՏԱՐԻՆԷ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՆԱԴԻՐԵԱՆՑԸ

որի համար ցաւակցութեամբ յայտնում են ազգականներին և ծանօթներին Զաքարիա Պետրոսեան եւ Սօֆիա Յովհաննիսեան Գրիգորեանները, Աւետիք Պօղոսեան, Պօղոս Յովհաննիսեան, Եղիսաբէթ Ջիմշերեան, Յարութիւն Օհանջանեան Նադիրեանցները եւ Արամ Սահակեան Իսահակեանցը

Ամբիծքը տեղի կունենայ ամսիս 17 և 18-ին, երեկոյեան $6^1/_2$ ժամին, սեփական տանը՝ Օրբելիանովսկայա փողոց, № 32. յուղարկաւորութիւնը և տեղափոխութիւնը նոյն տանից դէպի Շուլավէր գիւղը շաբաթ, ամսիս 19-ին, ցերեկվայ ժամը $9^1/_2$-ին, իսկ թաղումը՝ կիրակի, ամսիս 20-ին, նոյն գիւղի սուրբ Մեսրովբ եկեղեցու գաւթում։ 2—2

Լոյս տեսաւ

„ԾԻԾԱՂԱԲԵՐ“

Հայրիկ, Պարոնեան, Պոլը-Պուղի, Մոլլա-Նասր-Էդդին և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։

182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն—անեկդոտներ, 112 երես, գինը՝ 20 կոպէկ։

Դիմել գրավաճառներին։ Ինձնից գումարով գնողներին 20% զեղչ և ճանապարհածախսը իմ հաշւին։ Մշտական հասցէս՝ Тифлисъ, Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.

(չ. ու. կ) (առ.) 10—1

Լոյս տեսաւ
Յօբելեանական յանձնաժողովի հրատարակութեամբ
Լ. ԲԱԲԱՅԵԱՆԻ
„Լէօ“
կենսագրական-գրական ակնարկ նրա 25-ամեայ յօբելեանի առիթով.
ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

Վաճառվում է բոլոր գրավաճառների մօտ։

(13, 18, 20) առ. 3—2

Ուրբաթ, ապրիլի 18-ին
Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում
տիկին Օ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԸ
Մի խումբ Թատերասէրների մասնակցութեամբ
կը ներկայացնէ հայերէն լեզուով
ԱՐԻ ԲԱԺԱՆՎԵՆՔ
կոմեդիա 3 արար. հեղ. Սարդուի

Մասնակցում են տ. տ. Վ. Աղամալեան, Հ. Աստուածատրեան, օր. օր. Ի. Քալանթար, Ն. Էմինեան, Ե. Տիգրանեան, պ. պ. բժիշկ Զարգարեան, Ա. Կուսիկեան, բժիշկ Ն. Խատիսեան, Գ. Խատիսեան, Յ. Ջմշկեան, Կ. Մարգարեան։

Սկիզբն է ուղիղ ժամը 8-ին
Տեղերի գինն է 4 ր. 10 կ.-ից մինչև 1 ր. 10 կ.
Տոմսակներ չեն ուղարկվելու

Տոմսակները կարելի է ստանալ Գանովսկայա փող. № 19, ԿԱՐ ու ՁԵՒԻ արհեստանոցում, իսկ ներկայացման օրը Ժողովարանում։

Րէժիսոր՝ Օ. Մայսուրեան
2—2

ՇԷՐԱՄԻ ՍԵՐՄ

Բաղդադի յայտնի ֆիրմայի, ստացված է Թիւրքիայից և ծախվում է գործարանային գներով ԼԱՐՃԷԻ սերմերի դէպօում, Միխայլովսկի պրօսպէկտ, № 23, Զ. ՄԱՆԻԵՎԻ մագազինում՝ Պուշկինսկայա փող., ուղղափառ սեմինարիայի հանդէպ, Ի. Մ. ՄԱՄՈՒԼՕՎԻ գինետանը՝ Գօլօվինսկի պրօսպեկտ, № 25.

առ. (ա. օ) 10—9

Ե՞ՐԲ ԼԻՆԵՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր ընթերցողները գիտեն, որ Թիֆլիսում տեղի ունեցան մի քանի ժողովներ կաթողիկոսական ընտրութիւնների հարցի առիթով և որ ընտրված է մի յատուկ յանձնաժողով այդ հարցի քննութեան և մշակութեան համար։ Յանձնաժողովը, նկատի առնելով մի շարք հանգամանքներ և ուշադրութեան առնելով այն, որ կաթողիկոսի ընտրութիւնը պէտք է տեղի ունենայ հոկտեմբերի վերջին, եկաւ այն եզրակացութեան, որ նպատակայարմար կը լինի պատուիրակների և պատգամաւորների ընտրութիւնները կատարել աշնան սկզբին, սեպտեմբերի առաջին կիսում։

Իսկ որովհետև սինօդը մտադիր է ընտրութիւնները սկսել առաջիկայ մայիս ամսից, ուստի յանձնաժողովը բարւոք համարեց դիմել տեղակալին և խնդրել, որ ընտրութիւնները յետաձգվեն մինչև սեպտեմբեր։

Արդարև ինչ հարկաւորութիւն կայ պատուիրակների և պատգամաւորների ընտրութիւնները անելու այժմ, մինչև ամառ, երբ 4—5 ամիս շարունակվող մի մեծ ժամանակամիջոց պէտք է նրանց բաժանէ կաթողիկոսական ընտրութեան օրից։ Այդ ժամանակամիջոցում կարող են տեղի ունենալ զանազան դէպքեր, որոնք կը փոխեն ընտրողների տրամադրութիւնները և հայեցակէտերը թէ թեկնածուների և թէ կաթողիկոսութեան հետ կապված խնդիրների վերաբերութեամբ։

Ընտրութիւնների վաղ նշանակելը խորհուրդ ունէր այն ժամանակ, երբ կարծվում էր, թէ կարելի կը լինի կաթողիկոսական ընտրութիւնները կատարել այժմ։

Իսկ յետաձգելով ընտրութիւնները մինչև սեպտեմբեր, ժողովուրդը ժամանակ կունենայ քննութեան առնել կաթողիկոսութեան հետ կապված զանազան խնդիրներ և աւելի վստահելի ու ճիշտ տեղեկութիւններ ժողովել կաթողիկոսական թեկնածուների մասին։ Յիրաւի, մինչև սեպտեմբեր ամիսը մենք ունենք մեր տրամադրութեան տակ չորս ամիս ժամանակ, որը կարող է ծառայել այն պակասը լրացնելու համար, որը ներկայումս գոյութիւն ունի հասարակական գիտակցութեան մէջ ընտրութիւնների վերաբերութեամբ։

Եւ անշուշտ՝ աւելի լաւ է, որ չորս ամիս ժամանակը նախապատրաստական նպատակների ծառայէ, քան թէ նա բոլորովին ապարդիւն անցնէ։ Իսկ այդպէս կը լինի, եթէ ընտրութիւնները այժմ կատարվեն, սպասեցնելով պատգամաւորներին մինչև ընտրութեան օրը։

Մեր խօսքը անշուշտ ռուսահայերի ընտրութիւնների մասին է և չէ վերաբերում Թիւրքիային, որտեղ ընտրութիւնների յարմարագոյն ժամանակը կորոշեն այնտեղի հանգամանքներին լաւատեղեակները՝—պատրիարքը իր գործակից սահմանադրական մարմիններով։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլիս, 17 ապրիլի

Հիւպատոսական վերջին տեղեկութիւնները վկայում են, որ Վանում (?) հայերի տրամադրութիւնը շարունակում է ճնշված մնալ, որովհետև մահմեդականները շարունակ սպառնում են կոտորածը վերսկսել։

Ձուկանները կրկին փակ են։ (Հ. Գ.)

—

Մոսկվայից հեռագրում են մեզ ապրիլի 17-ից.

Երէկ՝ պրօֆէսոր Պոստնիկովի նախագահութեամբ և 900 պատգամաւորների ներկայութեամբ բացվեց կօօպերատիվ ընկերութիւնների համառուսական համագումարը։

Ողջոյններ են ստացված Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բէլգիայի և Շվէյցարիայի կօօպերատիվ ընկերութիւններից։

Տէր-Մարտիրոսեանց

Մոսկվա, 17 ապրիլի

Երէկ բացվեց կօօպերատիվ (ընկերակցական) հաստատութիւնների ներկայացուցիչների համառուսական համագումարը։

Նախագահ ընտրվեց Պետերբուրգի պոլիտեխնիկումի վերատեսուչ Պօստնիկովը։

Համագումարի բացման առիթով մի շարք ճառեր արտասանվեցին. ընդգծվեց այն հանգամանքը, որ համագումարը պէտք է զուտ գործնական լինի, հեռու կուսակցականութիւնից և քաղաքականութիւնից, որովհետև միայն չէզոք հողի վրա կօօպերացիան աջողութիւն կունենայ։

Շնորհաւորական հեռագիրներ են ստացված Աւստրիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Դանիայի, Բէլգիայի կօօպերատիվ հաստատութիւններից, Ֆրանսիայի սօցիալիստիքական կօօպերացիաների միութիւնից։

Համագումարը բաժանվեց հետևեալ սեկցիաների. սպառողների ընկերութիւններ, մանր վարկի ընկերութիւններ, գիւղատնտեսական ընկերութիւններ, աշխատաւոր արտէլներ։ («Հ. Գ.»)

—

Թէհրան, 16 ապրիլի

Րահիմ-խանը, որ վերջերս բանտարկութիւնից ազատվեց և եկաւ մէջլիս, փախել է մի քանի ձիաւորներով Ատրպատական, ճանապարհին կողոպտելով քարավաններին և կտրտելով հեռագրաթելերը։ («Հ. Գ.»)

—

Թէհրան, 16 ապրիլի

Ատրպատականի գեներալ - նահանգապետ նշանակված՝ գիտութիւնների մինիստր Մուխբիրուս-Սալթանէն այսօր Կովկասի վրայով մեկնում է Թաւրիզ։ Նրա յաջորդ նշանակված է հասարակական աշխատանքների նախկին մինիստր Մուխրանդիսուլ Մեմալիքը։ («Հ. Գ.»)

—

Լօնդօն, 17 ապրիլի

Պատասխանելով հարցապնդման, ստատս-սեկրէտարի օգնական Գօրգօուզ յայտնեց, որ աւղանական էմիրը միջոցներ է ձեռք առել, որպէսզի արգելէ իր հպատակներին աջակցութիւն ցոյց տալ ապստամբած մօհմանդ ցեղին։ Գօրգօուզի ասելով, միջոցները հասել են իրանց նպատակին։

Միևնոյն ժամանակ Գօրգօուզը յայտնեց, որ էմիրը դեռ իր համաձայնութիւնը չէ տուել անգլօ-ռուսական համաձայնութեան այն մասին, որ վերաբերում է Աւղանիստանին։ («Հ. Գ.»)

—

Լօնդօն, 16 ապրիլի

Բէյտէրի գործակալութեան Պէկինից հեռագրում են, որ չինական կառավարութիւնը պաշտօնապէս բողոքեց այն բանի դէմ, որ ճապօնական վարչութիւնը իր իշխանութիւնը տարածել է Ցգիան-Դաօի վրա, որ ընկած է Կորէայի և Չինաստանի միջև։ Չինաստանը չէ ընդունում, որ այդ նահանգը պատկանում է Կորէային։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 17 ապրիլի

Աֆօնում, ռուսաց դեսպանի պահանջով, Մակեդօնիայի ռուսաց քաղաքացիական գործակալի օգնական Պետրիայեվը և ռուսաց օֆիցէրը կրկին ձեռնարկեցին հսկողութիւն սահմանել այն քննութեան վրա, որ կատարում են թիւրքաց իշխանութիւնները ռուս վանական Մովսէսի սպանութեան առիթով։ Նոր տեղեկութիւններին նայած, սպանութեան մէջ կասկածվում է յունական վարդապետը։

Մինիստրների խորհրդի ազդեցիկ մասի խորհրդի համաձայն, Բ. Դուռը վճռեց Հերակլեան ածխահանքերի հարցում զիջել։ Մեծ վէզիրը այցելեց ֆրանսիական դեսպանին և յայտնեց, որ Բ. Դուռը պատրաստ է կատարել նրա պահանջների մի մասը։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 17 ապրիլի

Ռուսաց դեսպանի պահանջի համաձայն, Բ. Դուռը պատուիրագրեց Սալօնիկի վալուն՝ ներողութիւն խնդրել Ռուսաստանին յանձին Սալօնիկի ռուսաց հիւպատոսի՝ հիւպատոսարանի թարգմանի համար, որ մի ամիս առաջ վիրաւորվեց անյայտ չարագործի ձեռքով։

Վալին կատարեց պահանջը, յայտնելով թիւրքաց կառավարութեան անկեղծ ցաւակցութիւնը։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 17 ապրիլի

Հաստատվում է այն տեղեկութիւնը, որ Սօֆիայի թիւրքաց կօմիսար Սադրգ-փաշան պաշտօնազուրկ է եղել։ Պատճառը բացատրում են նրանով, որ Սադրգ-փաշան պաշտօնական այցելութեամբ բօլգարական իշխանի մօտ, որ եղել է զինւորական զգեստով, գնացել է քաղաքացիական հագուստով։ Իշխանը զանգատվել է և յայտնել, որ այլ ևս չի ընդունի Սադրգ-փաշային («Հ. Գ.»)

—

Զաքաթալա, 13 ապրիլի

Յայտնի է արդէն, որ Զաքաթալայի շըրջանում մի տարուց ի վեր բուն էր դրել Սիբիրից եկած գեօզամցի յայտնի աւազակապետ Մօլլա-Մամէդը իր հսկայ շայկաներով, որոնք թալանում, կողոպտում, սպանում, այրում էին ինչ որ ձեռքներն էր ընկնում։ Մտնում էին տներն՝ օր ցերեկով, յափշտակում ամեն բան, հետները սարերը տանելով գեղեցիկ կանանց ու օրիորդներին... Այդ մարդ-հրէշը իր շայկայով վերջին 3—4 ամսվայ ընթացքում անպատմելի վնասներ ու զրկանքներ հասցրեց Զաքաթալայից Թիֆլիս տանող ճանապարհի վրա խեղճ ճամբորդներին ու ապրանքատար սայլապաններին, ֆուրգօնչիներին։

Եւ ահա այսօր, առաւօտեան ժամը 9-ին, այդ մարդ-գազանի և իր մի հաւատարիմ ընկերոջ լէշերը սայլի վրա դրած, բազմաթիւ ստրաժնիկներով, քաղաք բերին։ Ահագին բազմութիւնը հետևում էր ստրաժնիկներին, որոնք՝ հպարտ իրանց կատարած քաջագործութիւնով կամենում էին աւելի ևս փայլ տալ այդ գնացքին...

Մօլլա-Մամէդին և իր ընկերին սպանել են Զաքաթալայից մօտաւորապէս 10 վերստի վրա գտնված Կատեխ գիւղում, ուր գնացած են լինում մեր գազան-իգիթները «քէֆ» անելու մէկի տանը։ Հէնց ապրիլի լոյս 13-ի գիշերն էլ լինում է նրանց զազրելի կենաց վախճանը այդ տան մէջ։

Յիսունի չափ ստրաժնիկներ մի կօզակ-օֆիցէրի ու նաիբի առաջնորդութեամբ պատում են տունը և սկսվում է երկուստեք կողմից հրացանաձգութիւն. բազմաթիւ գնդակների տարափի տակ հրէշները տեղն ու տեղը փչում են իրանց շունչը։ Ստրաժնիկների կողմից ոչ ոք չէ վնասվել։

Տեղացի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կաթողիկոսական ընտրութեան առիթով Թիֆլիսում կազմված ժամանակաւոր յանձնաժողովը,—որի անդամներն են պ. պ. Ալ. Քալանթար, Ս. Յարութիւնեան, Հ. Առաքելեան, Ս. Մամիկոնեան, Ա. Բաբախանեան, բժշկ. Ստեփանեան, բժշկ. Վ. Արծրունի, Ս. Արծրունի, Ա. Արասխանեան և Ս. Նազարբէգեան,—վերջին օրերս ունեցաւ մի քանի նիստեր, որոնց մէջ քննեց մի քանի հարցեր՝ ընտրութիւններին վերաբերեալ և եկաւ հետևեալ եզրակացութիւններին.

1) Ի նկատի ունենալով, որ 1865-ին Փոխարքայի կողմից հրատարակված ընտրական կանոններով առաջնորդանիստ քաղաքներին ընտրական ամեն մեծ իրաւունքներ և արտօնութիւններ են տրված և դրանով խախտվում է գաւառների մասնակցութեան արդար չափը, ուստի անհրաժեշտ է միջնորդել տեղապահի և սինօդի միջոցով Փոխարքայի առաջ, որ այդ կանոնների համապատասխան յօդուածները փոխվեն. 2) այդ առիթով անհրաժեշտ է խնդրել տեղապահից յետաձգել տալ բոլոր թեմերում ծխական պատուիրակների ընտրութիւնը մինչև այդ հարցի վերջնական լուծումը, նշանակելով պատուիրակների ընտրութիւնը սեպտեմբերի սկզբին. իսկ թեմական պատգամաւորների ընտրութիւնը՝ հոկտեմբերի սկզբին. 3) Նախքան կաթողիկոսական հաւանական կանդիդատների որոշումը, անհրաժեշտ է մշակել մի սկզբունքային ծրագիր՝ թէ ինչ ակնկալութիւններ, պահանջներ ունի հայ ժողովուրդը ապագայ կաթողիկոսից և ինչ եղանակով այսուհետև պէտք է կառավարվի հայոց եկեղեցին։ Այդ ծրագիրը պէտք է կանխօրէն հրատարակվի կաթողիկոսի ընտրութիւնից առաջ և ենթարկվի Թիֆլիսում գումարվելիք մի խորհրդակցութեան և ապա համազգային ընտրողական ժողովի քննութեան, որից յետոյ ներկայացնել ընտրված կաթողիկոսին, իբրև հայ ժողովրդի ցանկութիւններ և իղձեր. 4) աշխատել գաւառական քաղաքներում ևս կազմակերպել տեղական մասնաժողովներ և ժողովներ՝ կաթողիկոսական ընտրութեան հարցը քննելու և լուսաբանելու համար. 5) գումարել Թիֆլիսում մայիսի վերջերին խորհրդակցութիւն գաւառական ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Յանձնաժողովը, ինչպէս մեզ հաղորդում են, արդէն իր դիմումն արել է տեղապահ Սուրէնեան սրբազանին և բանակցութիւններ է սկսել գաւառների զանազան գործիչների հետ։

Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Փիբ, 25 մարտի

Անցեալ տարվայ նոյեմբեր ամսի 3-ից «Մշակի» № 148-ում Փիբից գրված էր մի նամակ փիբեցիների անելանելի դրութեան մասին։ Այդ նամակում ասված էր, թէ աշխատանքի ընդունակ տղամարդիկ ցրվել են զանազան տեղեր մշակութեան՝ սովի պատճառով։ Նրանցից շատերը վերադարձել են գիւղը առանց կոպէկի։ Դրանց մի մասը վարակիչ տիֆ հիւանդութիւնով եկաւ, և գիւղի մեծամասնութիւնը վարակվեց։ Տիֆ հիւանդութիւնը դեռ շարունակվում է մինչև այսօր էլ. վախճանվել են՝ 23 տղամարդ ու 26 կինմարդ։ Փետրվար ամսից երևացել է երեխաների մէջ ծաղիկ հիւանդութիւն. համեմատած մեր հարևան գիւղերի հետ, մեզ մօտ այնքան վնաս չէ տալիս. ծաղկով վախճանվել են 16 հոգի։

Այստեղ խիստ թանգութիւն է տիրում. ալիւրի պուդը 2 րուբլի 30 կոպէկ, գարին 1 ր. 60 կ., իւղի ֆունտը 50 կ., 3—4 ձուն 5 կ.։ Խոտի բարթը (30 խուրձը), որ սրանից առաջ 2 րուբլի էր, բարձրացաւ 4 ր. 50 կ.։ Փիբը կարողանում է իր բոլոր հարևան գիւղերին բաւականութիւն տալ խոտի կողմից այսպիսի տարիներում։ Փիբեցիների միակ ապրուստի աղբիւրը խոտահարքի դաշտերն են, որոնք գտնվում են 12 վերստ հեռաւորութեան վրա։ Այդքան խոտը կրվում է գրաստներով, այն էլ վատ ու ցեխ ճանապարհներով. դրա մասին ևս ուշադրութիւն չեն դարձնում ո՛չ գիւղի պաշտօնական անձինք և ո՛չ երիտասարդութիւնը։

Սրանով թէ տեղացիների և թէ ժամանակաւոր օտարընակ փիբեցիների ուշադրութիւնն եմ հրաւիրում, որպէս զի համակերպվեն կանոնաւոր ճանապարհ շինելու վրա, նոյնպէս աշխատեն խոտ հաւաքելու ու կապելու (прессъ) մեքենաներ ձեռք բերելու, որոնցով դիւրացրած կը լինեն իրա՛ց գործը և կը կարողանան աւելի խոտ ձեռք բերել, քան թէ ներկայ պայմաններում։

Մկրտիչ

—

Գանձակ, 12 ապրիլի

Տեղի ունեցաւ սպանված գաւառապետ Աւալիանու (վրացի) հանդիսաւոր թաղումը։ Հանգուցեալին թաղեցին հայոց թաղի ռուսաց եկեղեցու բակում։ Բազմաթիւ պսակների թւում կային նաև Գանձակի թուրք ազգաբնակութեան, ինչպէս և մի քանի հայ գիւղական համայնքների կողմից։ Բոլոր գիւղերը ունէին թաղմանը մասնակցող ներկայացուցիչներ, իւրաքանչիւր գիւղը մի քանի անձնաւորութիւններից բաղկացած։ Գաւառապետի սպանութեան պատճառով այս գիշեր խուզարկութիւններ կատարվեցին մի քանի հայերի տներում, որի ժամանակ ձերբակալվեցին ազնուական Լեւոն-բէկ Մելիք-Մնացականեանը և Մովսէս-բէկ Բարուժեանը ու երկու ուրիշ քաղաքացիք, որոնց անունները հնար չունեցայ իմանալու։ Դեռ չէ պարզված, թէ սպանութիւնը ում գործն է և ինչ ազգի է պատկանում ոճրագործը. Թուրքերը խստիւ զայրացել են, որ հայերը սպանութեան վայրը Թուրքաց մասն են ընտրել։

Կառավարական նպաստներ բաժանող գիւղական վաքիլների դէմ, տեղի թէ անտեղի, բողոքողների թիւը մեծ ծաւալ է ստանում։ Բողոքում են գլխաւորապէս չունեւորները։

Սագան

—

Ղշլաղ, 7 ապրիլի

Ղշլաղ գիւղը ներկայումս ունի մի ծխական դպրոց, գիտակից հոգաբարձութիւն և գրադարան-ընթերցարան։ Վերջին հիմնարկութեան բացվելու օրից մեր խաւարասէր քեօխվայի և նրա համախոհների հանգստութիւնը խանգարվել է։ Չէ՞ որ այդ նուիրական հիմնարկութիւնը պէտք է մի օր բաց անի տգէտ գիւղացիների աչքերը։ Բայց քօռ բուերը կարող են միթէ ապրել խաւարը հալածող լոյսի մէջ։ Ահա այս է պատճառը, որ գիւղական խաւարամիտների խմբակը այժմեանից թակարդներ է լարում մեր նորաբողբոջ գրադարան-ընթերցարանի դէմ։

Մի քանի օր առաջ մեր գիւղի խանութներից մէկում քեօխվան կոչ է անում տգէտ գիւղացիներին չը յաճախել ընթերցարան և չը լսել «փարմասօն» ուսուցչի քարոզները։

Այս անգամ գիւղական տզրուկներն իրանց երազած նպատակին կը հասնէին, եթէ գիտակից գիւղացիները չը բողոքէին հրապարակով նրանց դէմ և չը բացատրէին նրանց վնասակար միտքը։

Մանուկ Ղազարեան

—

Քարվանսարա, 5 ապրիլի

Այսօր ստացայ Խաչտարակ գիւղի քահանայից այս գրութիւնը. «Սաստիկ նեղված են սովի կողմից և ծառի ճիւղերով են սնանվում Միքայէլ և Յովսէփ Եղիկեանները, Բալաբէգ և Պետրոս Խանումեանները, Աբրահամ և Տիգրան Երամեանները, Երանոսի Քաժալեանը և Յովհաննէս Դանիէլեանը»։ Երկու խօսք. մարդիկ սոված են, ծառի ճիւղեր են ուտում. ահա ամբողջը։ Բարոյական պարտականութիւն է ընկնում մեր գաւառի օտարբնակների վրա, մանաւանդ երիտասարդների, որ անմիջական օգնութեան հասնեն գաւառին։ Լսում ենք, որ մեր գիւղի երիտասարդները Թիֆլիս հանգանակութեան են դիմել սովածների օգտին. շտապելու է օգնութեան հասնել. րոպէն թանգ է։

Մեսրոպ ք. Եգիլեան

—

Նոր-Բայազէտ, 10 ապրիլի

Օրերը բացվել են, բայց մինչև օրս կառավարութեան տուած սերմացուն չէ ստացվել այստեղ։ Ժողովուրդը յուսահատութեան մէջ է։ Եթէ մինչև ապրիլի 20-ը չը ստացվի սերմացուն, այնուհետև պէտք է ենթադրել, որ այս աշնան ազգաբնակութիւնը դարձեալ սովի է մատնվելու, որովհետև, եթէ ապրիլի 30-ից յետոյ սերմացուն ստացվի, մինչև սրա բաժանելը և փոփոխելը տեղական ցորենի հետ այս և այն տեղերում՝ կը գայ մայիսը։ Իսկ այստեղի մայիսվայ ցանածը աշնանը ուշ կը հասնի և կենթարկվի ցրտերին, ինչպէս անցեալ տարի պատահեց, որից կարող է ժողովուրդը տուժել։ Գաւառապետը մի քանի անգամ յանդիմանել է կապալառուին, բայց ասում են, որ նա ցորենը հասցնելը մինչև օրս՝ այսօր-վաղը գցեց այն մտքով, որ քրէհը էժանանար։ Այս էլ մի ցաւ։

Սովը և կարմրուկ հիւանդութիւնը երեխաների մէջ իրանց բոլոր ոյժերով իշխում են այստեղ, թէև մահվան դէպքեր չը կան։ Այս դառը վիճակի մէջ են գտնվում Նորադուզ և Ղշլաղ գիւղերը։

Ցանկալի է, որ մինչև աշուն ով ինչով կարող էր՝ օգնէր այս տարաբաղդ ժողովրդին. հողագործ դասակարգը այստեղ ապրուստի մի այլ միջոց չունի։ Ցանվածը ցուրտը, կարկուտը, ժանգը, մուկն է տանում, կամ հացի տեղ խոտ է բուսնում. երաշտն էլ միւս կողմից։ Ի՞նչ հող տայ գլխին այստեղի ռանչպարը։

X.

—

Ախալցխա, 10 ապրիլի

Ախալցխայի հայոց եկ. ծխական դպրոցների տեսուչ Յ. Իւսուֆեանի և մի խումբ ուսուցիչների միջև խլրտումներ ու անբաւականութիւններ են ծագել, որի պատճառով տեսուչը պատուիրել է դպրոցի հոգաբարձութեան, որ այդ ըմբոստ և իր հրամանը չը կատարող ուսուցիչներին (5 հոգուն) ռոճիկը չը տան։ Չը նայելով ուսուցիչների բողոքներին, հոգաբարձութիւնը կատարեց տեսչի պատուէրը և մինչև այսօր էլ այդ ուսուցիչներին ոչ արտաքսում է, ոչ էլ ռոճիկն է տալիս։ Ինչպէս լսել ենք, ուսուցիչները իրանց այդ զրկանքի դէմ հեռագրով բողոքել են ս. առաջնորդին, որը և պատուիրել է ուղարկել իրան գործի մանրամասնութիւնը գրաւորապէս։

Ծխական

—

Զաքաթալա, 9 ապրիլի

Երկու օր առաջ այստեղ պատահեց հետևեալ սոսկալի դէպքը։ Ամիրջան Հայրապետեանի կինը անհեակլի վառարանը վառելով և այնտեղ թողնելով իր չորս տարեկան աղջկանը՝ ինքը դուրս է գնում։ Երեխան կամենալով տաքանալ, ըստ երևոյթին, մէջքը դէմ է տալիս վառարանի դռնակին, որից և կպչում է մանկիկի հանդերձը... Անկարող լինելով հանգցնել շորերը՝ աղջիկը սկսում է աղաղակել՝ «մայրիկ, վառւմ՛»։ Սակայն մինչև մօր վրա հասնելը արդէն վառվում է դժբաղդ երեխան...

Տեղացի

—

Մերվ, 26 մարտի

Ամսիս 2-ին, պ. Սամսոն Աւետիսեանցի նշանադրութեան հանդէսում հանդիսականները 32 րուբլի հաւաքեցին Կովկասի սովատանջ ժողովրդի օգտին, որ և ուղարկում եմ խմբագրութեանդ ըստ պատկանելոյն յանձնելու։

Մերվում օրվայ խօսակցութիւնը ենթադրելի ռուս-թիւրքական պատերազմն է։

Քաղաքիս հայերն էլ այս օտար երկրում, ինչպէս կասեն, միմեանց միս են ուտում իրանց գծուծ շահերի համար և վնասում են բարեգործական հիմնարկութիւններին։

Տեղս ունենք մի ծխական ուսումնարան երեք դասարանով, որը պահվում է ըստ կարողութեան ծխական տուրքերով, առանց աշակերտական թօշակի, և մէկ «Կանանց բարեգործական ընկերութիւն»։ Եւ ինչ էք կարծում. այդ երկու հաստատութիւնները խիստ անհաշտ աչքով են նայում միմեանց վրա։ Մի խումբ մարդիկ, որոնք գործում են ի նպաստ «Կանանց բարեգործական ընկերութեան», ուսումնարանին չեն ուզում փող տալ, առարկելով որ հոգաբարձուները «իրանց» մարդկանցից չեն. միւս կազմի մարդիկ էլ աշխատում են «Կանանց բարեգործական ընկերութեան» վնասել, կամ գոնէ չօգնել։ Այդ երկու թայֆաները բաժանված են այսպէս. զօկեր և ղարաբաղցիք։ Ղարաբաղցոց բաժին է ընկած ուսումնարանը, իսկ զօկերին՝ «Կանանց բարեգործական ընկերութիւնը»։ Պէտք է խոստովանել, որ զօկերը աւելի եռանդոտ, աշխատասէր և քիչ էլ պնդերես են. բռնեցին օձիքդ՝ բաց չեն թողնի, մինչև որ փող չը պոկեն։ Իսկ ղարաբաղցին շուտ բարկանում հեռանում է։

Մարդասպանութիւնը, դրամաշորթութիւնը և այլ յանցագործութիւնները, որոնք տնտեսապէս ու բարոյապէս քայքայում են ժողովրդին, սովորական են դառել. այս չարիքի դէմ չեն մտածում ընդհանուր ոյժով կռւելու, այլ ընդհակառակը մէկի թշուառութեան վրա ուրախանում է միւսը, կամ շատ-շատ՝ քունջ ու պուճախներում բամբասում են, հայհոյում այս կամ այն կուսակցութեան։

Մի բան, որ շատ բնորոշ է, այն է, որ ում ձեռքով էլ կատարվում է յանցանքը, ով էլ լինի նրա հեղինակը, իսկոյն վերագրում են հայերին, այն էլ անպայման դաշնակցականներին։ Իսկ այդ հանգամանքը չափազանց նպաստում է ամեն կարգի ու ազգի սրիկաներին բոլորովին անվախ կերպով շարունակելու իրանց շահատակութիւնները։

Ս. Պ—բէկեանց

—

Գանձակ, 15 ապրիլի

Երէկ, երեկոյեան ժամը մօտ 9-ին, քաղաքիս Բօշի փողոցում, ատրճանակի չորս հարուածով տեղն ու տեղը սպանվեց Աբլահ գիւղացի դաբբեն Սամսոն Բարխեանցը։ Կասկածով ձերբակալված են երկու հայ։

Ապրիլի լոյս 12-ի գիշերը գողերը ծակելով Աւետիս Ստեփանեանցի խանութի կտուրը՝ ներս են մտնում խանութ և գողանում այնտեղից մօտ 200 րուբլու մանուֆակտուրային ապրանք։

Այս գիշեր խուզարկութեան ենթարկվեցին «Շուշի» հիւրանոցը և Նախչուանց քարվանսարայը։ Խուզարկութեան հետևանքի մասին միւս անգամ։

Հիւրանոցատէրեր եղբ. Մնացականեանները (չօվդարեցի) ձերբակալված ու բանտ են տարված։

Սագան

—

Օրդուբաթ, 10 ապրիլի

Օրդուբաթի ս. Ստեփաննոս եկեղեցին 13 տարի շարունակ ժամանակաւոր հովւող քահանաների շնորհիւ անտէրութեան էր մատնված. ունեցել է երէցփոխներ, որոնք շատ էլ ուշք չեն դարձրել եկեղեցու թէ ներքին բարեկարգութեանը և թէ նրա պահպանմանը. վերջապէս ենթարկվել է այն ցաւին, որին ենթակայ են համարեա թէ մեր բոլոր եկեղեցիները։ Հաղիւ օրդուբաթցիք սթափվելով զգացին իրանց թուլութիւնը և անհոգութիւնը. 2 տարի անքահանայ մնալուց յետոյ, հազիւ թէ աջողվեց, հոգևոր իշխանութեան միջոցով, հրաւիրել մի քահանայ, և յոյս ունեն, որ այսուհետև տեղիս եկեղեցին կը մտնի ցանկալի բարեկարգ ընթացքի մէջ և ծխականներն էլ կը հանգստանան և կը մխիթարվեն հոգեպէս։

Ոգևորված ապագայի բարեյաջող բարեկարգութիւնից, ապրիլի 8-ին կայացած ծխական ժողովում հասարակութիւնը ընտրեց երէցփոխ ս. Ստեփաննոս եկեղեցու համար մի բանիմաց և իր գործին արի անձն՝ պ. Գալուստ Գրիգորեանցին։ Նոյն ժողովում հանգուցեալ միրզա-Մկրտիչ Ադամեանցի որդի պ. Կարապետ Ադամեանցը յայտնեց ժողովականներին, որ իր հայրը կտակել է Օրդուբաթի ս. Ստեփաննոս եկեղեցուն մի պարտէզ. ինքը յատկապէս եկել է կատարելու հօր կտակը, ուստի խնդրում է ժողովականներից անել պարտ ու պատշաճ կարգադրութիւնը և ստանալ այդ կալուածը։ Ժողովականները, նախագահի խնդրանօք, յօժարակամ ընդունեցին այդ ժառանգին (600 ր. արժողութեամբ) նուէրը և որոշեցին՝ ա) խնդրել նորընտիր երէցփոխ պ. Գալուստ Գրիգորեանցին, որ հետևէ օրինական ճանապարհով ընդունել այդ կալուածը, բ) ամսիս 16-ին, պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարել և հանգուցեալի մեծադիր պատկերը կախել ուսումնարանի դահլիճում և գ) ամենայն տարի մարտի 8-ին պատարագով և հոգեհանգստով յաւերժացնել հանգուցեալի յիշատակը։

Ն. Սիմէօնեանց

—

Փիր, (Գանձ. գաւ.), 8 ապրիլի

Անցեալ օրը սովամահ եղան Սարգիս Խաչբուլաղեանը և կինը, թողնելով մանր 4 երեխաներին սոսկալի վիճակում։

Այսօր էլ լսեցինք, որ նոյն Խաչբուլաղեանի երեխաներից մէկն էլ վախճանվեց, իսկ միւսները ծանր հիւանդութեան և սովի մէջ տառապում են. Օրերս սովամահ է եղել և Բարսեղ Ազարեանը։ Իսկ սննդի պակասութիւնից ու գիւղում տիրող մի քանի հիւանդութիւններից (տիֆ, ծաղիկ, կարմրուկ, բկուռոյց, գլլջա և այլն) մեռնողներին թիւ ու համար չը կայ. մեռնում են անխտիր՝ մեծեր ու փոքրեր. օր չէ անցնում, որ առնուազը 1—4 մեռել չը լինի գիւղում (ընթերցողը գուցէ և կը կարծէ թէ չափազանցութիւն է). բժշկական օգնութիւն բնաւ չը կայ։

Մեր 700 տնից բաղկացած գիւղի մեծամասնութիւնը կարօտ է «չոր հացի»։ Գիւղացիները նոյնիսկ երեք փոխտով ալիւր են առնում ալիւրավաճառներից, իսկ մի մասն էլ հաց է պատրաստում գարու և կարտոֆիլի խառնուրդից։

Կառավարութեան նպաստը սկսել են բաժանել, որը ստացվում է Գանձակ քաղաքում մեծամեծ դժուարութեամբ. մեր գիւղացիները բողոքում են նպաստի անարդար բաժանման համար, որ կատարվում է գիւղից իբր ընտրված վաքիլների (տանուտէրի նախագահութեամբ) միջոցով. բացի այդ ամեն մի պուդին 1—3 ֆունտ պակաս են տալիս, և 1—4 կոպէկ փող են առնում, նպաստ ստացողին (բողոքող է թէ համբերող)։

Սերմացուն բաժանվում է գութանաւորներին և ունեւորներին, որոնք առանց այդ նպաստի էլ ունեն թէ սերմացու և թէ առնելու փող. ձեռնունայն է մնում դարձեալ ընչազուրկ գիւղացին։ Ցանկալի կը լինէր, որ սերմացուն բաժանվէր ոչ գութանաւորներին և ունեւորներին։

Գիւղացու կարիքների առաջ կառավարութեան նպաստը մի կաթիլ է միայն. անհրաժեշտ է և ուրիշ օգնութիւն՝ գիւղը սովի և հիւանդութեան ճիրաններից ազատելու համար։ Բարերար անձնաւորութեանց ու բարեգործական հիմնարկութիւնների ուշադրութիւնն ենք հրաւիրում մեր թշուառ գիւղի վրա, իսկ օտարութեան մէջ գտնվող փիրեցիների բարոյական պարտականութիւնն է ի նկատի ունենալ իրանց գիւղի թշուառ վիճակը և շտապել օգնութեան հասնելու։

Սարգիս Մանուէլեանց

—

Զարչաթ գիւղ (Նուխու գ.), 4 ապրիլի

Թէև մեզանում հայ-թուրքական ընդհարումներից ժողովուրդը չը վնասվեց, բայց միևնոյն ժամանակ հացի կարիքը այնքան շատ է, որ կատարեալ սով է տիրում այս գիւղում. ասում են, որ մի քանի տան երեխաներին ծեծելով քնեցրել են հաց չը լինելու պատճառով. Ինչ անի գիւղացին, ում դիմէ. ամբողջ երեք ամիս է՝ անդադար սպասում է, որ պէտք է պետական գանձարանից փոխադարձաբար ժողովուրդը փող ստանայ. մինչև փողի տալը, հոգիները դուրս կը գայ։ Էլի Աստուած օրհնի գթասիրտ մարդկանց. այսօր, ամսիս 4-ին, սաբաթլուեցի Յովսէփ և Յովհաննէս Սոփիխանեանները և Բէհբուդ Տօնիխեանցը բաժանեցին չքաւոր դասակարգին 1500 պուդ ցորեն ու գարի առանց տոկոսի, այն պայմանով, որ երբ կունենան, այն ժամանակ կարող են տալ։

Թ. Տէր-Համբարձումեան

—

Մեղրի, 9 ապրիլի

Այս առաջին անգամը չէ, որ Մեղրիի գետը մարդկանց անմեղ զոհեր է կլանում։

Ամսիս 7-ին, սեփական գործով եկել էր Կանդուրովի ագարակի պղնձահանքի կառավարիչ Ադամ Կարալիվոնովը (յոյն, 27 տարեկան)։ Վերադառնալիս անտառ հանդի ճանապարհով ձիով գետը անցնելիս՝ ձին սայթաքում ընկնում է. ընկնում է և Կարալիվոնովը և խեղդվում։

Նոյն օրը Ջրի մէջ դիակը գտան ու բերին գիւղ։

Երէկ, ամսիս 8-ին, դիակը տարան Հագաբակ գիւղ, որտեղ կայ յունաց մի փոքրիկ գերեզմանատուն։

Կարալիվոնով թողեց մի ամբողջ ընտանիք երեսի վրա։

Դ. Վ.

—

Ռև գիւղ (Խաչէն), 30 մարտի

Մարտի 15-ին Խնձրեստան գիւղում կայացաւ տանուտէրի ընտրութիւն։ Ընտրութեանը ներկայ էր Շուշու հաշտարար միջնորդը։ Հրաւիրել էին Խնձրեստանի հասարակութեան հետևեալ գիւղերի գիւղացիներին. Ռև, Ղշլաղ, Ուլուբաբ, Սարդարաշէն, Սէյդիշէն, Հիլիս և Խնձրեստան։ Ընտրութիւնը շատ խառն անցաւ։ Երկու թեկնածուներ կային. խնձրեստանցի Պետրոս Դանիէլեան և սէյդիշէնացի Աղաբէկ Սարումեանց։ Հասարակութեան մեծամասնութիւնը ուզում էր, որ տանուտէրը լինի վերընտրեալ Սարումեանցը. իսկ միրօվօյ պօսրէդնիկը իր յորդորներով համարեա թէ զօռով ընտրել տուեց Պետրոս Դանիէլեանցին։

Խնձրեստանի հասարակութեան վերոյիշեալ գիւղերում երևում են քաղցածութիւններ. այն մարդիկ, որոնք շատից քչից փող ունեն, կարողանում են իրանց գլուխը պահել. իսկ խեղճ ու անբաղդ չքաւորները հարևաններից ողորմութիւն են խնդրում, սակայն ողորմութիւն անող չը կայ։ Մարտի 10-ից սկսած արդէն գարնանային վարուցանքի ժամանակ է, բայց սերմ չը կայ, ունեցողներն էլ չեն վարում, որովհետև տաւարի ուտելիք չը կայ։ Մարտ ամսի մէկից եղանակները շատ ցրտել են, այնպէս որ ոչ մի տաւար արօտի չէ գնում։ Գարնանային վարուցանքը մնում է և դեռ երկար կը մնայ, եթէ եղանակը չը փոխվի։

Ներսէս Տէր-Ստեփանեան

—

Ախալցխա, 9 ապրիլի

Կիրակի, ապրիլի 6-ին, քաղաքային վարչութեան դահլիճում տեղի ունեցաւ Կովկ. հայոց բար. ընկ. Ախալցխայի տեղական ճիւղի բացման պաշտօնական առաջին ընդհանուր ժողովը, պաշտօնակատար անձերի ընտրութիւններ կատարելու համար։

Ընկերութեան անդամների թիւը մինչև այդ օրը հասնում էր 72-ի, որոնցից ժողովին ներկայ էին 37 անդամներ։ Զբաղման նիւթն էր. ընտրել վարչութեան հինգ անդամ, երկու փոխանդամ և վերստուգիչ յանձնաժողովի երեք անդամ։

Միաձայն ընտրվեց նախագահ Ախալցխայի փոխանորդ Սիօն վարդապետը, իսկ քարտուղար Խաչ. Թէլմիզեանցը։

Թերթիկներով վարչութեան անդամների և փոխանդամներ թեկնածուներ առաջարկվեցին 16 անուններ, որոնցից 9-ը հրաժարվելով, մնացեալ եօթը թեկնածուներից գաղտնի քուէարկութեամբ վարչութեան անդամ ընտրվեցին՝ պ. պ. Գրիգոր Բուդուղեան, բժիշկ Յարութիւն Այվազեան, Գրիգոր Զաթալբաշեան, Խորէն Ասմարեան և Աբրահամ Անխոսեան, իսկ փոխ-անդամներ ընտրվեցին Մկրտիչ Գրիգորեան և Աբրահամ քահ. Ղազեղեան։ Յետոյ վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Պետ. Մկեպրեան, Ստեփան Սահփանեան և Միհրան Սաղաթէլեան։

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ նորընտիր վարչութեան առաջին նիստը, ուր վարչութեան նախագահ ընտրվեց բժ. Յ. Այվազեան, փոխ-նախագահ՝ Գ. Բուդուղեան, իսկ գանձապահ-քարտուղար՝ Աբր. Անխոսեան։ Նորընտիր վարչութիւնը ստանձնելով իր պաշտօնը, մտադիր է այս զատկական տօներին եկեղեցիներում աղքատ դասի համար փող հաւաքել և բաժանել։

Կովկ. հ. բ. ը. Ախալցխայի ճիւղը վերաբացվելով մեր ազգաբնակութեանը ուրախութիւն և խրախուսանք պատճառեց. նա տեսել է նախընթացներում նրա արդիւնաւոր գործունէութիւնը յանձին ժրաջան ու գործօն ղեկավարների։ Ախալցխայի ճիւղն էր, որ ամբողջ ընկերութեան մէջ առաջինը տուեց իր միջից պատուաւոր անդամ-հանգուցեալ Իսահակ Մելիք-Հայկազեանին։

Անդամ

—

Փիր գիւղ (Գանձակի գ.), 28 մարտի

Փիրը բաղկացած լինելով 700 ծխից, ծխային տուրքով երկու տարի է պահում է մի ծխական միդասեան երկսեռ դպրոց, որտեղ սովորում են 110 աշակերտ. ունի երկու ուսուցիչ, բայց և այնպէս հարիւրաւոր մանուկներ մնում են դուրսը առանց սովորելու, շնորհիւ գիւղի անծայր չքաւորութեան. զգում է փիրեցին այդ հրամայական կրթութեան պահանջը, դժբաղդաբար միջոցների սղութիւնը աննարին են դարձնում բաւարարութիւն տալու։

Ծիածան

—

Տաշկենդ, 4 ապրիլի

Տխուր է իրականութիւնը Տաշկենդում... Չը կայ հայկական ոչ մի բարեկրթական հաստատութիւն, չը կայ ոչ բարեգործական ընկերութիւն, ոչ հրատարակչական ընկերութիւն, ոչ աղքատախնամ կամ որբախնամ ընկերութիւն, չը կայ նոյնիսկ մի հասարակ դպրոց. անցեալ աշունքը և ձմեռը ջանքեր գործ դրվեցին գոնէ մի տարրական դպրոց ունենալու, բայց այդ էլ չաջողվեց. բարենպատակ հաստատութիւնների և դպրոցների փոխարէն մենք տեսնում էինք այստեղ բազմաթիւ աղքատներ, անգործներ, որբեր և փողոցներում թափառող երեխաներ։ Կարիքը հրամայողական շեշտով պահանջ է դնում մեր առաջ գործ դնել բոլոր հնարաւոր ջանքերը Տաշկենդում հիմնելու բարեգործական ընկերութիւն լայն ծրագրով։

Արտ. Օհանջանեանց

—

Թարթարի հովիտ, մարտի 20-ին

Բնութեան ահեղ բարկութիւնները շարունակում են թափվել։

Ներկայ ճգնաժամի օրերին հարուած հարուածի ետևից է որ տեղում է հոգևարքի մէջ հևացող դժբաղդ ժողովրդի գլխին, մինը միւսից ծանր, մինը միւսից կատաղի։

Թարթար գետի հովտում այս տարի, եթէ չը հաշւենք աշնան այն չը տեսնված սաստիկ ձիւնը, որը բռնեց շատ ու շատ տեղեր, կարելի է ասել՝ ձմեռ չը տեսանք։

Յունվար և փետրվար ամիսները սկսվեցին բուք ու բորանները։

Ահա երկու շաբաթ է ինչ երկինքը պատած է թանձր մառախուղով, տեղում է անընդհատ ձիւն, երբեմն ձիւնախառն անձրև։ Գետինը բռնված է ձեան հաստ շերտով։ Տանից դուրս գալ չը կայ։

Տների տանիքները ճաքճքվեցին, գոմեր փլվեցին և մեծ վնասներ առաջացան։

Ծառերի ծաղիկները թափվեցին, ամբողջովին փչացան։ Անասունների պաշարը վաղուց արդէն վերջացած էր. նախիրը դուրս էր գալիս արօտ, բայց այսօր մնացել է գոմերում փակված։ Խոտի սայլը ամեն տարի եղել է 2—3 րուբլի, այսօր խղճուկ գիւղացին ստիպված է իր բերնի պատառը յետ քաշել և սայլը 6—7 րուբ. խոտ առնել, որ գոնէ իր տան դուռ, իր աչքի լոյս միակ գոմշուկ-եզբօրից չը զրկվի։ Գարնանացանքը այստեղ շուտ պէտք է սկսվէր, բայց մառախլապատ երկինքը յամառ է իր քմահաճ դերում։

Սիւնեցի Լևոն

—

Դաշբուլաղ գ. (Նուխու գաւ.), 28 մարտի

Մեզ հարևան Զարղաթ (հայ) գիւղացիները 80—100 տուն մինչև օրս իրանցով կերակրվել են, ծախելով տնային պիտոյքները. չորս տարի շարունակ երաշտութիւնից զուրկ են մնում ցանածից. այժմ նրանց մէջ կատարեալ սով է տիրում։ Շատերը դիմում են հարևան դաշնեցիներին (թուրք) պարտ վեր առնում կորեկ մէկ կամ երկու թաղար (թաղարը 18 պուդ է), որի փոխարէն կալին (յուլիսին) պիտի վճարեն երեսուն րուբլի։ Մուրհակների մէջ գրում են միայն փողի քանակութիւնը։ Մեզ մօտ կորեկի պուդը այժմ ծախվում է 1 րուբլի. ուրեմն չորս ամսը լրանալուց յետոյ խեղճ գիւղացիները պիտի վճարեն 12 րուբլի. սակայն ուրախ են որ գոնէ ճարվում է։

Մեր տանուտէր պ. Աւագեանը մի աղերսալի համախոսական կազմեց և ուղարկեց Գանձակի նահանգապետին Նուխու գաւառապետի միջոցով, որ եթէ շուտով գիւղացիներին օգնութիւն չը հասցվի, սովամահների դէպքեր առաջ կը գան։ Եթէ ամենակարճ միջոցում օգնութիւն չը հասցվի, կորած են գիւղացիները։ Մեզ մօտ հարևանուհին տեսնում է, որ Յովհաննէս Խառատեանի կինը արդէն չորս օր է տանից դուրս չէ գալիս, մտնում է տուն և տեսնում, որ իր մանր հինգ երեխաներով բոլորը պառկած՝ չեն կարողանում կանգնել, իսկոյն գնում է իր տանից հաց բերում. ուտում են և ուշքի գալիս։

Յ. Շիրվանեան

ԱՐՄԱՒԻՐԸ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՀԱՐՑԸ

—

Ներկայումս արմաւիրցիների համար ամենահրատապ հարցերից մինն է՝ աւանը քաղաք դարձնելու հարցը։ Վաղուց է արդէն, ինչ կառավարչական շրջաններում արծարծվում է այդ հարցը, բայց տակաւին չէ իրագործվել և օրէ-ցօր սպասում են հարցի լուծմանը։

Տեղական լրագիրները զբաղվում են դրանով։ Ի՞նչ շարժառիթներ կան շտապեցնելու այդ հարցի լուծումը։

Արմաւիրը իր աշխարհագրական դիրքով հիւսիսային Կովկասում, իր արդիւնահանութեամբ, իր քաղաքային բնոյթով, կենցաղավարութեամբ, իր վաճառականական խոշոր շրջանառութեամբ, իր գործարաններով և վերջապէս ազգաբնակութեան բազմամարդութեամբ կառավարութեան ուշադրութիւնն է գրաւել իր վրա և թւում է թէ հակառակ բնիկ չէրքէզախօս հայ համայնքի ցանկութեան՝ իրագործվելու է կառավարութեան հայեացքը՝ վերածել Արմաւիրը քաղաքի։

Արմաւիրը մօտաւորապէս 40,000 ազգաբնակութիւն ունի, որից 10,000-ի չափ տեղացի և եկւոր հայերն են կազմում, իսկ մնացեալ 30,000-ը ըստ մեծի մասին ռուսներ են։ Աւանի ներքին կառավարութիւնը կենտրոնացած է բնիկ չէրքէզախօս հայերի ձեռքում, որոնց թիւը չէ անցնում 5—6000-ից։ Սրանց են պատկանում նաև 24,900 դեսեատին հողի տիրապետութիւնը։ Եկւոր ժողովուրդը, լինեն նրանք ռուսներ թէ հայեր, ոչ մի մասնակցութիւն չունեն հասարակական-վարչական հաստատութիւնների և համայնական ժողովների մէջ։ Երկիւղ կրելով թէ մի գուցէ Արմաւիրը քաղաք դառնալով՝ գիւղական համայնքը զրկվի իր հողերից, Արմաւիրի հասարակութիւնը միջնորդութիւն էր յարուցել՝ թողնելու տեղական չէրքէզախօս հայ համայնքի նախկին արտօնութիւնները և հողային տիրապետութիւնները։

Հիւսիսային Կովկասի լրագիրներից երևում է, որ 1907 թ. նոյեմբերի ամսում կովկասեան Փոխարքայի կողմից պաշտօնական դիմումն է արված Արմաւիր աւանը քաղաք դարձնելու, գլխաւորապէս այն պատճառաբանութեամբ, թէ նախ՝ Արմաւիրը հիւսիսային Կովկասում ծառայում է իբրև լայնածաւալ առևտրական մի շուկայ, երկրորդ՝ երկաթուղագծի վրա աշխարհագրական յարմար դիրք ունենալով, շրջակայքի խիտ ազգաբնակութեան վերաբերմամբ յարմարութիւններ ունի իբրև շրջակայքի կենտրոնատեղի՝ քաղաքական ագիտացիա և յեղափոխական պրօպագանդա անելու, որից հետևցնում է, թէ յանցաւոր տարրերի համար գործելու ազատ ասպարէզ է բացվում, բայց Արմաւիրը գիւղական պօլիցիա ունենալով՝ անզօր է հանդիսանում հակելու այդ անբարեյոյս տարրերի վրա, ուստի և հարկաւոր է Արմաւիրը քաղաք դարձնել և քաղաքային զօրեղ պօլիցիական կազմակերպութիւն հաստատել՝ այդ չարիքների առաջն առնելու համար։

Փոխարքայի առաջարկութեան մէջ մըտնում է նաև քաղաքային հողերի վերաբերեալ հետևեալ ծրագիրը։ Ապագայ Արմաւիր քաղաքին պէտք է յատկացնել 3000 դեսեատին հող գիւղական համայնական հողերից, որից 1279 դեսեատինը դառնում է անմիջապէս քաղաքի սեփականութիւն. դըրանք այն հողերն են, որոնք կազմում են քաղաքի փողոցները, գերեզմանատները, աւազուտները, ճահճային տեղերը, հօտերի համար յատկացված արօտատեղիները, գետերի և վտակների ծաւալները, դաշտերը, գիւղական ճանապարհները և այլն, իսկ մնացեալ 1721 դեսեատին հողը պէտք է վճարով գնէ Արմաւիրի ապագայ քաղաքային վարչութիւնը գիւղական կառավարութիւնից՝ կամ փոխադարձ համաձայնութեամբ կամ օրէնքով սահմանված գնահատութեամբ, հանգցնելով պարտքը 10 տարվայ ընթացքում, վճարելով միևնոյն ժամանակ 6 տոկոս։

Այս հարցը արդէն քննվել է մինիստրական խորհրդում և սպասվում է, որ ինչ-ինչ փոփոխութեամբ անցնէ Պետական Դումա՝ օրինականութիւն ստանալու համար։

Բնիկ արմաւիրցինները եթէ չեն ցանկանում կամովին քաղաքացի գրվել, դարձեալ մնում են իրանց նախկին իրաւունքներով և համարվում են գիւղացիներ իրանց համայնական ներքին կառավարութեամբ և հողային տիրապետութեամբ։

Դիտակ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ախալցխա, 9 ապրիլի

Շաբաթ, ապրիլի 5-ին Կարապետեան ուսումնարանի դահլիճում դերասան Արաքսեանը, իր կնոջ և թատերասէրների մշտական խմբի հետ միասին, տուեց «Տրիլբի» յայտնի դրաման։ Ներկայացումը անցաւ բաւական աջող, մանաւանդ աչքի ընկաւ տիկ. Արաքսեանը Տրիլբիի դերում։ Լաւ էր նոյնպէս օր. Ղույումճիբաշեանը։ Հասարակութիւնը լիքն էր դահլիճում։

Ամսիս 15-ին տեղի է ունենալու դերասան Արաքսեանի վերջին հրաժեշտի ներկայացումը նոյն սիրողների մասնակցութեամբ. խաղալու են Գոգոլի յայտնի «Վերաքննիչ» կօմեդիան։ Դերասան Արաքսեանը իր կնոջ հետ այս սէզօնին սիրողների կողմից հրաւիրված էր Ախալցխա և նրանց հետ միասին այս ձմեռը տուեց մի շարք ներկայացումներ, թէ ժողովարանում՝ անդամների համար, թէ Կարապետեան դպրոցում էժանացրած գներով հասարակ դասի համար։

Սիր.

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք պ. Փանեանցի միջոցով կարսեցի տիկին Բալասան և իր ամուսին Յարութիւն Մովսէսեաններից 10 րուբլի, ի յիշատակ նորերս սպանված Յ. Վարդպատրիկեանի, պսակի փոխարէն։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

2 ապրիլի

Խնդրում եմ չը մերժէք տեղ տալ ձեր թերթում այս երկտողին։

Այն հարցը, որ ես այստեղ շօշափում եմ, ունի մեծ նշանակութիւն մեզ՝ ուսանողների համար։

Ինչպէս յայտնի է, Պետերբուրգի եկեղեցական գումարների մի հաստատ մասը (մօտ 15—17 հազար) յատկացված է ուսանողութեան կարիքներին։ Երկար ժամանակ այդ փողերը բաժանվում էին պրիմիտիվ կերպով. այս կամ այն եկեղեցական խորհրդի անդամը առաջ էր բերում իր ծանօթի կանդիդատուրան։

Այդ սիստեմը խաղաց ուսանողութեան մէջ անբարոյականացման մեծ դեր։

Ուսանողը, նախ քան դիմել եկեղեցական խորհրդին, մեծ եռանդ էր գործ դնում գրաւելու մի որևէ անդամին իր կողմը։

Ի հարկէ, որոնք ունէին խորհրդում ծանօթ, դա շուտ էր աջողվում, իսկ այն ուսանողը, որը չունէր, մեծ մասամբ մնում էր զրկված օգնութիւնից։ Մի խօսքով այն, ինչ որ այժմ սովորաբար կոչվում է խնամիութիւն, մեծ չափով տիրում է այստեղ եկեղեցական գումարները բաժանելու մէջ։

Բայց այդ սիստեմի դէմ վերջին երկու տարիներումս ուսանողութեան լայն խաւերում սկսվեց անբաւականութիւն, և եկեղեցական խորհուրդը վճռեց չը գնալ ժամանակի պահանջի դէմ և հրաւիրեց ուսանողութեան մասնակցել իրանցից ընտրված ներկայացուցիչներով գումարը բաժանելու մէջ։

Ես չեմ ուզում այստեղ կանգ առնել մեր ներկայացուցիչների գործունէութեան վրա. նրանք եթէ արել են սխալ քայլեր, ոչ այնքան մեղաւոր են, որքան անփորձ, շնորհիւ գործի նորութեան։ Բայց բնորոշը այստեղ եկեղեցական խորհրդի տակտիկան է։

Փետրվար ամսում բացվում է երկու թոշակ։

Եկեղեցական խորհուրդն ունի իր կանդիդատները, որոնց նշանակել են թէ խորհուրդը և թէ ուսանողական բիւրօն (ներկայացուցիչները)։

Բանը նրանումն է, որ եկեղեցական խորհրդին դիմում է պատրիարք Օրմանեանը, խնդրելով յատկացնել իր ազգականին թոշակ։ Եւ ահա եկեղեցական խորհուրդը այդ երկու թոշակից մէկը, որ պէտք է յատկացնէր Պետերբուրգի ուսանողութեան, յատկացնում է արքեպիսկոպոս Օրմանեանի ազգականին։

Ոչինչ չունենալով այդ երիտասարդի դէմ, որին ոչ ոք չէ ճանաչում և որը եկող տարի պիտի լինի ուսանող, պէտք է նկատել հետևեալը. այստեղ Պետերբուրգում կան 20—30 չքաւոր ուսանողներ, որոնք 1—3 տարի սպասում են՝ վարելով քաղցած, թափառական կեանք, առանց հաստատ ու որոշ յոյս ունենալու նորմալ կեանքի մասին։ Եկեղեցական խորհուրդը յայտարարել էր կանդիդատների ցուցակը, թւով 20, և վերջը թոշակը տուեց մի երիտասարդի, որ նոյնիսկ կանդիդատ չէր։ Բացի դրանից, պարզ է, որ այդ երիտասարդը, ունենալով մի այնպիսի ազգական, ինչպիսին է արքեպ. Օրմանեանը, որը երևի այնքան չքաւոր չի լինի, այդ երիտասարդը անհամեմատ նիւթապէս ապահովված կը լինի, քան 20 կանդիդատները։

Փողերը յատկացված են ուսանողութեան, նրա չքաւոր խաւերին. շատ բնական է, որ գումարը բաժանելու մէջ գլխաւոր դերը պիտի կատարէ ուսանողութիւնը, յանձնարարելով գործը իր ներկայացուցիչներին։ Հրաւիրում ենք եկեղեցական խորհրդին լսել ուսանողութեան կարծիքը և ղեկավարվել գլխաւորապէս դրանով։

Ուսանող Յովհ. Դուրգարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կաթողիկոսի ընտրութեան համար Վրաստանի և Իմերէթի թեմակալ առաջնորդը շրջաբերական գրութիւնով կարգադրել է իր թեմի գաւառական պատուիրակների և Թիֆլիսի եկեղեցիների ներկայացուցիչների ընտրութիւնը կատարել առաջիկայ մայիսի 11-ին, իսկ թեմական պատգամաւորի ընտրութիւնը նշանակել է սոյն. 21-ին։ Այս մասին Թիֆլիսի, Գանձակի, Բաթումի և Քութայիսի նահանգապետներին ու Զաքաթալի և Սուխումի շրջանի կառավարիչներին տեղեկութիւն տալով խնդրել է աջակցութիւն ցոյց տալ ընտրութեան ժամանակ համաձայն 1865 թ. Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի տուած հրահանգի 1-ին յօդուածի։

◆ Մեզ հաղորդում են, որ Թեմիս առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը իր ունեցած բաւական լուրջ հիւանդութեան պատճառով (կրծքի), բժիշկների խորհրդով ստիպված լինելով Պետերբուրգ գնալ բժշկվելու համար մասնագէտ պրոֆեսորի մօտ, Զատկից առաջ դիմել էր հեռագրով կաթողիկոսական տեղապահին և խնդրել թոյլատրել իրան մեկնել Պետերբուրգ։

◆ Թիֆլիսի 4-րդ իգական գիմնազիայի վարչութիւնը վճռել է գիմնազիայի համար սեփական շինութիւն կառուցանել։ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը իր կողմից ներկայացուցիչ է ուղարկել այդ հարցը քննելու համար ինժեներ Զուրաբեանին։

◆ Թիֆլիսի էլեկտրաքարշի Նաւթլուղի գծի աշխատանքները մինչև քաղաքային սպանդանոցը արդէն աւարտված են և մօտ օրերս մինչև սպանդանոց փորձի համար մի վագօն կը թողնվի, իսկ մայիսի 1-ից այդ գծի վրա կը հաստատվի կանոնաւոր երթևեկութիւն։

◆ Կիրակի, ապրիլի 20-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում արխիտեկտոր Կ. Տատիշչևը մի դասախօսութիւն կը կարդայ ճապօնական գեղարուեստի մասին։

◆ «Посл. Новости» լրագիրը հաղորդում է, որ մօտ օրերս Պետերբուրգից Կովկաս է ուղարկվել մի բարձրաստիճան անձն՝ տեղական քաղաքացիական և զինւորական հաստատութիւնների մէջ վերաքննութիւն կատարելու համար։ Վերաքննիչի հետ մեկնելու է և իր դիւանատունը։ Վերաքննութիւնը կը տևէ մի ամսի չափ։

◆ Թիֆլիս է եկել մի քանի օրով Թիֆլիսի նահանգի կողմից Պետական Դումայի անդամ Կ. Չխէիձէն։

◆ Ապրիլի 13-ին Թիֆլիսում յանկարծամահ է եղել ճանապարհորդական հաղորդակցութեան կովկասեան շրջանի կառավարիչ ինժեներ Նովոժենկին։

◆ Վերջին օրերս անձրևների և սարերի ձիւների հալվելու պատճառով Կուր գետը բաւական յորդացել է, այնպէս որ վտանգ կարող է սպառնալ նրա վրա երթևեկող «բօրանի» համար։ Ի նկատի ունենալով յիշեալ հանգամանքը, քաղաքային վարչութիւնը կարգադրել է կանգնեցնել բօրանը։ Միևնոյն ժամանակ վարչութիւնը 675 րուբլի է խնդրում դումայից՝ նոր բօրան շինելու համար։

◆ Տեղական լրագիրները հաղորդում են, որ Բագւում մօտ օրերս ոստիկանութիւնը ձերբակալել և Պետերբուրգ է ուղարկել երկրորդ Պետական Դումայի անդամ՝ Թիֆլիս քաղաքի կողմից՝ Արշակ Զօհրաբեանին։

◆ Թիֆլիսում սկսել է հրատարակվել մահմեդական նոր շաբաթաթերթ «Մօզգար» անունով։ Խմբագիր-հրատարակիչն է Կ. Հիւսնիզադէ։

◆ Անդրկովկասի ակցիզային տուրքերի վարչութեան այժմեան կազմակերպութիւնը գտնելով արդէն հնացած և չը համապատասխանող երկրի ակցիզային գործի ժամանակակից կարիքներին, Կովկասի Փոխարքան յանձնարարել է իր խորհրդի անդամ Ջունկովսկուն՝ նախնական կերպով ծանօթանալ անդրկովկասեան ակցիզային վարչութեան գործունէութեան հետ, այն պայմանով, որ ապագայում Փոխարքայի խորհրդի քննութեան ներկայացվի այդ վարչութեան վերակազմութեան հարցը, առանձնապէս համապատասխանեցնելով Բագւի նաւթային արդիւնաբերութեան կարիքներին։ («Կ.»)

◆ Ապրիլի 15-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան շինութեան մէջ, մի խորհրդակցութիւն կայացաւ Մուխրանեան կամուրջի հարցի մասին։ Խորհրդակցութեանը մասնակցում էին քաղաքային վարչութեան անդամները, ձայնաւոր տեխնիկները և պրօֆեսոր Պատօնը։ Մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ ժողովը յանգեց Մուխրանեան կամուրջը մի անցքով կառուցանելու վրա, որի բացուածքը կը լինի 33 սաժէն։ Կամուրջի լայնութիւնը պէտք է լինի 17 մետր, որից 11,2 մետրը կը յատկացվի կառքերի երթևեկութեան համար, իսկ 2,9 մետրը՝ մայթերի համար։ Կամուրջը լինելու է հօրիզօնական ձևի, արօնքի սիստեմով։ Պեսկովսկի փողոցի կողմից հողի մակերևոյթը պէտք է բարձրացնել 0,3 սաժէնով։ Այսպիսի կամուրջի նախագծով վերացվում են այն պակասութիւնները, որոնք նկատվում են մինչև օրս կազմած նախագծերի մէջ։ Նոր նախագծով կամուրջի կառուցումը կը նստէ 21,000 րուբլով թանգ, քան միւս նախագծերով։ Իսկ մօտաւոր հաշւով ընդհանուր ծախք կը գնայ 280,000 րուբլի, որից 62,000 րուբլին կը ծախսվի քարէ սիւների վրա։ Պրօֆեսոր Պատօնը խոստացաւ մի ամսից յետոյ ուղարկել քարէ սիւների կառուցման նախագիծը, որպէսզի աշնանից հնարաւոր լինի ձեռնարկել կամուրջի աշխատանքներին։

◆ Կովկասի Փոխարքան Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետի միջոցով շնորհակալութիւն է յայտնել Թիֆլիսի ոստիկանապետին և նրա խնամքին յանձնված ոստիկանութեան այն կարգ ու կանոնի համար, որ ցոյց տուեց ոստիկանութիւնը նորին պայծառափայլութեան յօբելեանի օրերում։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ապրիլի 16-ին, առաւօտեան ժամը 10-ին, Նորաշէնսկայա փողոցում Նոր-Բայազէտի բնակիչներ Գեղամ Օհանովի և Ռուբէն Դարբինեանցի մէջ վէճ է ծագել, որի ժամանակ վերջինը դանակով մէջքից վիրաւորել է առաջինին։ Վիրաւորվածին տարել են հիւանդանոց, ուր բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ ուղարկել են տուն, իսկ Դարբինեանցին ձերբակալել են։

◆ Ապրիլի 16-ին, ցերեկվայ ժամը 2 և կէսին, «Берлинъ» հիւրանոցում յանկարծակի վախճանվել է Միխայիլ Կիշկինը (67 տարեկան)։ Դիակը տարել են Միքայէլեան հիւանդանոց։

◆ Ապրիլի 16-ին, երեկոյեան ժամը 9-ին, Մօղնինսկայա փողոցում № 7 տան մօտ անյայտ չարագործներ ատրճանակի 2 հարուածներով վիրաւորել են տեղացի Արշակ Գալստեանին։ Վիրաւորվածին տարել են Միքայէլեան հիւանդանոց։ Չարագործներին ձերբակալելու համար միջոցներ են ձեռք առնված։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կահիրէ, 15 մարտի

Ողբացեալ գրագէտ-հրապարակագիր Արփիար Արփիարեանի սպաննութեան առթիւ ազգային զայրոյթը, վիշտը և բողոքը արտայայտելու համար 1908 մարտ 1-ին Կահիրէի ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Եգիպտոսի հայոց գեր. առաջնորդի նախագահութեամբ գումարուած ժողովրդային համախմբումը պաշտօն տուաւ մասնաժողովիս ժողովրդային հանգանակութիւն մը բանալ մեծանուն զոհին մահարձան մը կանգնելու համար, որ ազգային զգացումին մէկ նոր և տևական արտայայտութիւնը պիտի ըլլայ և Արփիարեանի յիշատակը յաւերժացնելու պիտի ծառայէ։

Արփիար Արփիարեան եթէ բնական մահուամբ մեռած ըլլար, իր գրական և ազգային գործունէութիւնը արդէն պարտաւորութիւն պիտի դնէր հայ հասարակութեան վրա գնահատումի և յարգանքի գրաւական մը նուիրել իր յիշատակին։ Եղեռնը՝ որուն զոհ գնաց ինք իբր գաղափարի պայքարի մը անվեհեր աշխատաւորը՝ աւելի ևս կը շեշտէ այս պարտաւորութիւնը, որ կասկած չունինք թէ պիտի գնահատուի ամէն զգայուն հայու կողմէ։ Մասնաժողովս հրաւէր կը կարդայ հետևապէս ամէն կարգի ազգայիններու մասնակցիլ հանրային համերաշխութեան այս գործին, որ ազգին համբաւը արատաւորելու բնոյթն ունեցող ոճիրի մը դէմ յաւերժական բողոք մը պիտի կազմէ։

Մասնաժողովս այնքան աւելի գոհունակութեան առիթ պիտի ունենայ, որքան ընդհանուր ձև մը ստանայ ներկայ հանգանակութիւնը։

Դրկուած գումարները պիտի հաւաքուին յանձնաժողովիս գանձապետ Սեդրակ էֆէնտի Դաւիթեանի քով (հասցէ՝ Mr. Setrak Tavitian, C-ie. des Eaux, Le Caire (Egypte) և ցուցակները, ինչպէս նաև գործածութեան ձևը պիտի հրատարակուի արտասահմանի գլխաւոր հայ լրագիրներուն միջոցաւ։

Քաջայոյս ենք որ այս հրաւէրը պիտի գտնէ ընդհանուր ընդունելութիւն մը, ինչպէս ընդհանուր եղած է ողբացեալ հրապարակագրին սպաննումին պատճառած ցաւումը։

Ի դիմաց Յանձնաժողովի՝

Ատենապետ Մ. Պալըգճեան

Ատենադպիր Կ. Պալեան

—

Մօզդոկ, 8 մարտի

Տեղիս աւագ ուսուցիչ Ղ. Տէր-Գրիգորեանը, որի հետ ի թիւս շատերի խզել եմ բոլոր յարաբերութիւններս, կամենալով մի կերպ սուտ դուրս բերել պ. Արշակ Տէր-Յովսէփեանի յայտնած անցեալ տարի («Մշակ» № 180) ճիշտ տեղեկութիւնը, «որ ժողովուրդը բոլորովին վստահութիւն չունի դէպի այդ պարոնին յանձնված դպրոցները», «Մշակի» № 45-ի մէջ գրում է մի հերքում, որի մէջ ի միջի այլոց դիմում է ինձ։ Եւ իբրև փաստ իր ասածների առաջարկում է կարդալ «Վտակի» № 22-ում լոյս ընծայած իր յօդուածը, որտեղ ի թիւս շատերի իմ հասցէին ևս մի շարք կանացի բամբասանքներ է շռայլել։ Ես վաղուց ուղարկել եմ «Վտակին» իմ պատասխանը, բայց մինչև օրս չէ տպագրված. երևի «Վտակի» համար անարդար վարմունքը մի սովորական բան է։

Պարոն տեսուչը հեգնօրէն արտայայտելով մի քանի ժողովներում պ. Տէր-Յովսէփեանին հասարակութեան ցոյց տուած համակրանքը՝ ասում է. «Ձեզ է արժանի և քո ընկերներին, բարով վայելէք»։

Ես, որ նոյնպէս յիշված եմ պ. Տէր-Յովսէփեանի ընկերների թւում յօդուածի մէջ, խնայելով թերթի էջերը, առ այժմ չեմ մտնում մանրամասնութիւնների մէջ, այլ բաւականանում եմ պ. «տեսչին» ցանկանալով նոյնը. բարով վայելէք, պ. «տեսուչ», ժողովրդի այն համակրանքը, որ ձեր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում ցոյց է տուել, ցոյց է տալիս և այժմ, վերջին ընդհանուր ժողովում զանազան տիտղոսներ տալով ձեզ, ինչպէս՝ արբեցող, «Թարախ» և այլն։

Ուսուցիչ Տիգրան Աւագեանց

—

Մերվ, 6 ապրիլի

Անցեալ տարվայ դպրոցական տուրքերը գանձելու համար ծխական քահանայից հոգաբարձութեանս կողմից խոստացված 75 րուբլի կառքի փողը արժանապատիւ քահանան հրաժարվեց ստանալ և ամբողջապէս նուիրեց յօգուտ մեր ուսումնարանի մանկական գրադարանի։ Հոգաբարձութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը։

Անդամք հոգաբարձութեան՝

Յ. Աւետիսեան, Ա. Սաղաթէլեան

—

Ջիբուխլու, 9 ապրիլի

Մեր Ջիբուխլու գիւղը գտնվում է Սևանի լճի հիւսիսային ափի մօտ. ձմեռ ժամանակ համարեա թէ կտրվում է գիւղացիների յարաբերութիւնը միւս գիւղերի և քաղաքների հետ և ահա Թիւրքիայից գաղթելուց յետոյ՝ անցնում է մօտ ութսուն տարի, և մեր գիւղը չէ կարողացել իր սեփական միջոցներով ունենալ դպրոց, որտեղ հնարաւոր լինէր կրթել մեր երեխաներին։ Աշխարհի բարերարները մինչև հիմա զլանում էին ուշադրութիւն դարձնել մեզ վրա և օգնութեան ձեռք մեկնել, բայց անցեալ աշնան մեզ համար լոյսի նշոյլ ծագեց և յայտնի բարերար Աֆրիկեան ի թիւս հարիւրաւորների և մեզ ձեռք մեկնեց, բաց անելով մեր գիւղում ծխական միդասեան դպրոց և խոստանալով վճարել իւրաքանչիւր տարին 350 րուբլի։ Յայտնում ենք Տ. Աֆրիկեանին մեր խորին շնորհակալութիւնը։

Ի դիմաց հասարակութեան՝

Գաբրիէլ Խալաֆեանց, Միքայէլ Խալաֆեանց, Մարտիրոս Յարութիւնեան, Աբգար Գաբրիէլեան, Նիկողայոս Ստեփանեան, Մերկուրիոս Մարտիրոսեան

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ Պ. ԲՐԻՆԴԱՐԻՆ *)

(Նամակ խմբագրութեան)

Մոսկվա, 4 փետրվարի

«Վտակ» լրագրի №№ 20 և 21-ում կարդացի պ. Բրինդարի «Նորից մի քանի խօսք թեմական դպրոցի մասին» խորագրով խծբծանքները։ Ուշիմ ընթերցողը կարող է ամէն ինչ գտնել նրա գրութեան մէջ։ Հայհոյանքներ, կեղծիքներ, զրպարտութիւններ և անձնական գծուծ հաշիւներ, —ահա նրա խղճած տողերի մեծ մասը, որ այնքան սիրալիր կերպով հիւրընկալվել է «Վտակից» և նոյնիսկ սիրալիրութեամբ էլ տեղ գտել իր էջերում։ Եւ այս շատ հասկանալի է, քանի որ նա ուղղված է «Մշակի» և մեր դէմ։

Մենք խնայելով թէ գրական էթիկային, թէ «Մշակի» էջերին և թէ մեր սուղ ժամանակին՝ կը բաւականանանք նրա գրութեան գլխաւոր կէտերին պատասխանելով միայն։

Անցեալ տարվայ «Մշակի» № 189-ում խօսելով Շուշու թեմական դպրոցի վերջին երկու դասարանների փակման և նիւթական միջոցների մասին՝ ասել էինք. «Ընդունենք սակայն, որ թեմական դպրոցի սեփական աղբիւրները այնքան քիչ են, որ ստացված արդիւնքներով դպրոցի գոյութիւնն անկարող է պահպանվել։ Ընդունենք նաև այն, որ հայ-թուրքական ընդհարումների պատճառով նրա միջոցները պակասել են և նա առանց մասնաւոր օգնութեան պահպանվել չէ կարող։ Ամենքիս յայտնի է, որ անցեալ ձմեռ մի պատգամաւորութիւն՝ յանձին Աշոտ եպիսկոպոսի, գնացել էր Բագու նպաստներ ժողովելու դպրոցի օգտին։ Տողերիս գրողը այն ժամանակ Շուշի էր։ Աշոտ եպիսկոպոսը մի քանի ամիս Բագու մնալուց յետոյ վերադառնում է Շուշի և իր մի քարոզի մէջ յայտնում է հասարակութեան, «որ դպրոցի օգտին ժողոված փողը կը պահպանէ նրա գոյութիւնն երկու տարի ևս»։ Թէ Աշոտ եպիսկոպոսը որպիսի գումար էր ժողովել, այդ մեզ յայտնի չէ, քանի որ նա հրապարակով հաշիւ չէ տուել և այդ մասին ոչ մի խօսք չէ գրել մամուլում։ Նրա խօսքերից պարզ էր միայն այն, որ դպրոցը իր բոլոր դասարաններով պիտի շարունակէր պահպանել իր գոյութիւնը, բարեկարգվէր նրա վիճակը»...

Արդեօք մեր այս տողերից պարզ չէ, որ դպրոցի սեփական միջոցների բացակայութիւնը նրա վերջին երկու դասարանների փակման հիմք ծառայել չէ կարող։ Եւ այս շատ հասկանալի է, քանի որ Աշոտ եպիսկոպոսի խոստում արտասանած խօսքերի համաձայն՝ «դպրոցի օգտին ժողովված փողերը կը պահպանեն նրա գոյութիւնը երկու տարի ևս»։ Եւ այս բոլորից յետոյ, պ. Բրինդար դիտաւորեալ կերպով աղաւաղում է մեր ասածները և աւելացնում. «Չը գիտեմ, թէ Աշոտ եպիսկոպոսը ինչ յոյս է կապել բագւաբնակ հայ մեծատուների արած մեծ-մեծ խոստումների և Ղարաբաղի հայ ազգաբնակութեան սպասելիք տարվայ բերքի հետ, որ այդպիսի ենթադրութիւն է արել—եթէ արել է միայն»։

Ըստ երևոյթին, պարոնը իրերի դրութեան հետ ծանօթ չէ. Աշոտ եպիսկոպոսի հայ հարուստների վրա յոյս դնելու հարց լինել չէ կարող, քանի որ նրա խօսքը ասված է իր միսիան կատարելուց յետոյ՝ Ղազանչեցոց եկեղեցու բեմից։ Ուրիշ խօսքով, նա իր այդ խօսքերը ասել է այն ժամանակ միայն, երբ ժողովված էր 23,830 րուբլի յօգուտ դպրոցի (տես «Մշակ» №№ 6 և 10, 1908 թ.)։ Միամտաբար կերպով ասել, որ ես մի քանի տողերով պատասխանում եմ իմ առաջադրած հարցին,— այդ աւելի քան ծիծաղելի է։ Ակներև կերպով շրջել և քծնել Աշոտ եպիսկոպոսին ու ասել, որ նա ենթադրութիւն է արել միայն, —այդ աւելի քան անբարեխղճութիւն է։ Աշոտ եպիսկոպոսը իր խօսքերը գրական կերպով է ասել, այդ մասին գրել են նաև փողոց նետված աշակերտները (տես «Մշակ» № 116, 1907 թ.), գիտեն նաև Աշոտ եպիսկոպոսի համախոհները, բայց ակնյայտնի կերպով ստում, կեղծում և ուրանում են։

Ինչպիսի անհիմն տրամաբանութեամբ պ. Բրինդար առարկում է այդ մասին մեր դէմ։ Նա նոյնպիսի անհեթեթութեամբ էլ ճգնում է արդարացնել հոգաբարձութեան այն բանում, թէ նա ինչու մինչև օրս հաշիւ չէ տուել հասարակութեանը ժողովված նուէրների մասին։ Պ. Բրինդար այդ առթիւ ասում է. «Բայց թէ ինչու մինչև այժմ հոգաբարձութիւնը մամուլի մէջ հաշիւ չէ տուել հասարակութեան, այդ միթէ պարզ չէ հայ «դեմօկրատների» լիդերների համար, որ նորից հարց են տալիս։ Պարզ է. որովհետև շնորհիւ «Մշակի» անցեալ տարվայ կատարած մի շարք «ծառայութիւնների», կեղտոտ բամբասանքների, Շուշում մշակական բլոկի ընկած նախկին փառքը վերականգնելու համար գործ դրած միջոցների և, վերջապէս, շնորհիւ պ. Ոսկու-Ջօնի և նման լրատուների Շուշուց հաղորդած լուրերի՝ թեմական հոգաբարձութեան երկու անդամը (մէկը գանձապահ), դպրոցի տեսուչը չորս ուսուցիչների հետ հնարաւորութիւն չունեն Շուշի մտնելու. ու հետաքրքիր է, արդեօք ինչով է բացատրելու «Մշակը» այն երևոյթը, որ պ. Ոսկու-Ջօնի յօդուածից ուղիղ 20 օր առաջ խմբագրութեանը ուղարկած Շուշու թեմական դպրոցի մանրամասն հաշիւը չէ տպագրում, որի առթիւ և գրված է Ոսկու-Ջօնի յօդուածը, և տեղ է տալիս պարոնի ինսինուացիաներով լի յօդուածին...»

Չը գիտեմ, պ. Բրինդար այս տողերը գրելիս ի նկատի է ունեցել ծանր պատասխանատուութեան այն հետևանքները, որ սպառնում են նրան։ Դուրս է գալիս, որ շնորհիւ «Մշակի» և իմ Շուշուց հաղորդած լուրերի, դպրոցի հոգաբարձութեան երկու անդամները, տեսուչը և չորս ուսուցիչները հնարաւորութիւն չունեն քաղաք մտնելու։ Մենք կարիք ենք զգում պարզ խօսելու, քանի որ այդ բանի մասին իր ժամանակին գրվել է մամուլում։ Խօսքը, ընթերցող, անցեալ տարվայ ամառը Շուշում կատարված մի շարք ձերբակալութիւնների մասին է, որոնցից տուժել են նաև վերոյիշեալ անձինք։ Խղճմտանք և ազնուութիւն մոռացած պ. Բրինդարի խօսքերից դուրս է գալիս, որ իմ «Մշակին» հաղորդած լուրերի շնորհիւ են տուժել նրանք։ Դուրս է գալիս, որ ես այստեղ մի սուտ դեր եմ խաղացել հասարակութեան և մամուլի առաջ։ Եւ այս բոլորը այն ժամանակ միայն, երբ ես Մոսկվայում էի, երբ ձերբակալութիւնների մասին տեղեկութիւններ ստանում էի մեր պարբերական մամուլից և Մոսկվա եկող շուշեցիներից։ Ամօթ, հազար ամօթ ձեզ, պ. Բրինդար։ Ես միաժամանակ դիմում եմ պ. Բրինդարին և բաւարարութիւն պահանջում

---

*) Նիւթերի շատութեան պատճառով այս պատասխանի տպագրութիւնը ուշացվեց։ Ծ. խմբ.

այն ծանր վիրաւորանքի համար, որ նա հասցրել է ինձ։ Քաջութիւն ունեցէք հրապարակով ապացուցել, որ Շուշուց հաղորդած այդ լուրերի հեղինակը ես եմ եղել, բարեհաճէք դուրս գալ ասպարէզ և հաստատել ձեր գրածները, այսինքն որ իմ շնորհիւ են այդ մարդիկ տուժում։ Իսկ եթէ մեր այս տողերը լոյս տեսնելուց մինչև 10 օրը բաւարարութիւն չէք տալ մեր պահանջին, այն ժամանակ մենք այլ միջոցի կը դիմենք։

Այստեղ անհրաժեշտ է ասել նաև հետևեալը։ Չը գիտեմ, քաղաքից բացակայ հոգաբարձութեան երկու անդամի, տեսչի և չորս ուսուցիչների հարցը ինչ կապ ունի նուէրների հաշւետւութեան հետ։ Եթէ հաշւետւութիւնը տրվելու էր ամբողջ ուսուցչական խմբի, տեսչի և հոգաբարձութեան կողմից,—այդ այլ խնդիր է։ Մի՞թէ գուցէ դպրոցի աւագ ծառան էլ պիտի մասնակցութիւն ունենար այդ բանում։ Միթէ ամբողջ հիմնարկութեան մէջ մէկը չը կար, որ այդ թեթև հաշիւը կազմէր և տպել տար մամուլում։ Աշոտ եպիսկոպոսը հօ քաղաքումն էր. նա միայն պարտաւոր էր հաշիւ տալու հասարակութեանը։ Այո, Աշոտ եպիսկոպոսը պարտաւոր էր այդ անելու և ոչ թէ նրա այն ագէնտները, որոնք թարգման են հանդիսանում նրա մտքերի, ցանկութիւնների և նպատակների իրագործմանը։

Իսկ թէ ինչու «Մշակը» նախ իմ յօդուածն է տպել և յետոյ դպրոցի հոգաբարձու պ. Մելիքեանի հաշիւը (տես «Մշակ» №№ 6 և 10, 1908 թ.), այդ միայն այն պատճառով, որ ես յօդուածս ուղարկած էի «Մշակին» անցեալ տարւայ հոկտեմբերի 28-ին, այսինքն պ. Մելիքեանի ուղարկած հաշւից ուղիղ 35 օր առաջ։ Վաղ թէ ուշ իմ յօդուածը պէտք է տպագրվէր, և եթէ նա բաւական ուշ լոյս տեսաւ, այդ միայն այն պատճառով, որ «Մշակի» խմբագրութիւնը նիւթերի վերաբերմամբ հերթ է պահպանում։ Մինչև իսկ խմբագրութիւնն այդ մասին պատասխանել է Աշոտ եպիսկոպոսին (տես «Մշակ» № 2, 1908 թ.)։

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

—

«Մշակի» անցեալ տարվայ համարներում առիթ եմ ունեցել մի քանի անգամ խօսելու մեր կրթական, դպրոցական գործի շուրջը։ Ծանրացել եմ գլխաւորապէս այն հանգամանքի վրա, որ Թաւրիզահայը իր թէւ և գրպանի համեմատութեամբ շատ մեծ գումար է ծախսում իր դպրոցների վրա, բայց վերջիններս համաձայն իրանց կլանած գումարների արդիւնք չեն տալիս։ Թաւրիզահայը ամենամեծ տոկոս աշակերտութիւն է տալիս դպրոցներին, որով և մեծ տոկոս գրագէտներ ունենք, բայց ինչպէս նախնթացներով էլ շեշտել եմ, մեր կրթական մակարդակը, ցէնզը թերուսութիւնից հեռու չէ անցնում։ Եթէ ասեմ, որ մօտ 20 տարի առաջ ուսուցումը տեղիս Արամեան դպրոցում աւելի արդիւնաւէտ էր լինում իր նոյնիսկ ոչ այնքան կարող ուսուցիչներով, սխալված չեմ լինի։ Ցիշում եմ—այդ օրերում Արամեան դպրոցի չորրորդ դասարանն աւարտողները (այն ժամանակվայ չորրորդը վեց տարվայ կուրս էր, իսկ ներկայինը եօթը տարվայ) Էջմիածնում և Ներսիսեան դպրոցում չորրորդ դասարանն էին նստում, իսկ այժմեան հինգերորդներին պատրաստվելուց էլ յետոյ հազիւ է կարողանում երրորդ դասարան մտնել մեր Կովկասի թեմական դպրոցներում։ 8—9 տարվայ ընթացաւարտները հայերէն անսխալ գրել չը գիտեն. իսկ թէ ինչ վիճակի են օտար լեզուները և առարկաները, չարժէ երկարել։ Աւարտող աշակերտը պաշար չունի ամբարած։ Ֆրազեօրներ՝ որքան կուզէք։ Այս միայն մեր կարծիքը չէ, այլ շատերինը, որոնք մօտ են եղել դպրոցական գործին։ Ինչ է պատճառը, որ հնում քիչ ծախքով և ոչ աւելի կարող ուսուցիչներով համեմատաբար արդիւնքը մտաւորականի, կրթականի տեսակէտով աւելի էր, քան հիմա. չէ՞ որ ընաշրջման օրէնքով մենք հետզհետէ պիտի աւելի առաջ գնացած լինէինք։ Եւ այն գաղափարները, որոնք վերջին տարիներս յեղաշրջեցին համամարդկային ուղեղները, պակաս ազդեցութիւն չունեցան և հայ ուղեղների, մանաւորապէս թաւրիզահայ կամ պարսկահայ ուղեղների վրա։ Ինչպէս որ ամենաաննշան նիւթը վնասակար է թոյլ, տհաս ստամոքսների համար, այնպէս էլ ամենավեհ, սրբազան և համամարդկային գաղափարները վնասակար են տհաս, խակ գլուխների համար. ագէտ ծնողների նման, որոնք ծծկեր երեխաներին կերակրելով ոչ մարսեցուցիչ սնունդներով՝ խանգարում են նրանց ստամոքսային համակարգութիւնը, մենք ևս անմարս գաղափարներ ներշնչելով խակ գլուխներում այլասերում ենք մանուկ ուղեղները և հասարակութեան համար ոչ օգտաւէտ մասսա պատրաստում։ Կապկային ընդօրինակումները աւելի բուռն են մարդուս երեխայական և պատանեկական շրջաններում։ Փորձեցէք, եթէ ուսուցիչ էք, վարակել ձեր դպրոցը ամենաարտասոց գաղափարներով, և կը տեսնէք գէթ ժամանակաւորապէս աջողութիւն կունենաք։ Աշակերտը գիտէ օրինակել իր ուսուցչի ձևերը, շարժումները և բնականաբար նրա համոզումները և գաղափարները, և մի որոշ ժամանակ աշակերտութիւնը ոչխարային բնազդով հետևում է իր ուսուցչին, իր հովւին, ուր որ էլ առաջնորդելիս լինի նա. և ընդհանրապէս շատ ուշ է լինում. երբ աշակերտը խելահաս դառնալով կարողանում է սթափվել և մոլար ճանապարհից դուրս ցատկել. բայց մինչ այդ որքան թանգ են նստում այդպիսիները հասարակութեան համար իրանց ֆանատիկոսութեան շրջանում։ Իսկ եթէ ուսուցիչը ինքը չը մարսած, չիւրացրած գաղափարների կոչումով է հրապարակ նետվում, կարելի է երևակայել այդպիսի քարոզչի քայքայիչ և վատասերող դերը մատաղ ուղեղների վերաբերմամբ։ Հին ուսուցիչը աշխատում էր իր իմացածը, հասկացածը սովորեցնել, հասկացնել աշակերտին, իսկ նորը և իր չիմացածն է ուզում սովորեցնել. այդ է պատճառը, որ ներկայ մեր աշակերտութիւնը խօսքեր, ֆրազներ միայն ունի ամբարած ուղեղում, որոնցով պատրաստ է նա ամէն մի քայլափոխում գաղափարական պրօպագանդիստի կոչումով հրապարակ գալ վայրկենապէս յեղաշրջելով ամբողջ աշխարհը իր սխալ ու մոլար շաղփաղփանքներով...

Պարզ է, որ մի երեխայ երբ դպրոցների նստարանների վրա իր մատաղ ուղեղը խճողում է անմարս նիւթերով, անժամանակ գաղափարներով, շնորհիւ շրջապատի այլասերող ազդեցութեան, նա այլևս չէ կարող գիտութեան տաճարից պատրաստի և խսկական պաշարով դուրս գալ, կեանքի մէջ իր գոյութիւնը պատւաւոր կերպով պահպանել և օգտաւէտ լինել թէ հասարակութեան և թէ մարդկութեան համար։

Մենք այն կարծիքի ենք, որ հասարակական համամարդկային ասպարիզում եթէ մենք ուզում ենք մեր պատւաւոր դերը ունենալ, անպայման գիտութեան զէնքերով պիտի զինված լինենք։ Թերուսները մեզ պէս ազգերի խաւերում միայն կարող են վնասել։ Իսկական դաստիարակութիւնը պիտի լինի այսուհետև մեր փրկութեան ուղին, որովհետև մենք ներկայում վտանգաւոր թերուսութեան, այլասերման ժամանակում ենք ապրում, որի շարունակութիւնը այլ ևս հանդուրժելի չէ մեր շրջապատում և որի վերացման, անհետացման երաշխիքը դնում է մեր առաջ Ատրպատականի թեմական ժողովը իր «Ատրպատականի կենտրոնական դպրոց» ունենալու լուրջ մտածողութեամբ։ Տարիների փայփայած մեր տենչանքները կարծէք իրանց բեղմնաւորման շրջանն են թևակոխում։ Այո, երկար տարիների մտածողութիւն է Ատրպատականում կենտրոնական դպրոց ունենալու գաղափարը. սկզբում այդ գաղափարը տեսական, վերացական էր միայն. իսկ Եղիշէ ծ. վ. Մուրադեանի օրով (Նախկին թեմակալ) այդ գաղափարի իրականացման առաջին հիմնաքարը դրվեց։ Այդ կենտրոնական դպրոցի շէնքն էր, որ Ատրպատականի թեմակալ հայր Մուրադեանը Բաղչում գնեց պ. Ղազար Յակովբեանից, եթէ չեմ սխալվում 1902 թւին, պարսկահայ և ռուսահայ հարուստների օժանդակութեամբ 40,000 րուբլով։ Այդ գումարից 5000-ը պ. Ղազար Յակովբեանը որպէս պարսկահայ նուիրաբերեց, իսկ մնացած 35 հազարից 25-ի չափ հ. Մուրադեանը յանձնել էր եղբ. Թումանեանց առևտրական տանը. մնացորդի մասին պիտի հոգար Թաւրիզ գալուց յետ, երբ յիշեալը ստիպված եղաւ թողնել Ատրպատականի թեմակալութիւնը։ Հայր Մուրադեանից յետոյ այդ գործը մնաց երեսի վրա։ Ներկայ թեմակալի օրով պատգամաւորական ժողովը որոշեց այդ գործին ընթացք տալ և պէտք եղած դիմումները անել։ Որքան գիտենք, շէնքի արժէքը արդէն պատրաստ է և մայիս ամսին շէնքը կը յանձնվի ազգին։ Այդ շէնքը գտնվում է հայոց թաղերի կենտրոնում, ունի բաւականին ընդարձակ պարտէզ, ժամանակին կարելի է այդտեղ ունենալ և երկու թաղերի զատ-զատ ընթերցարանների և թատրոնասրահների փոխարէն՝ միացածները։ Իսկ առաջիկայ սեզոնից կարելի է երկու թաղի բարձր դասարանները միացնել և փոխադրել այդտեղ, հետզհետէ մտածելով ընդարձակ ծրագրի իրագործման մասին։ Ապագայ կենտրոնական դպրոցի մէջ նկատելով պարսկահայերի վերածնութիւնը, մենք ներկայիս կոչ ենք անում պարսկահայ այն մեծահամբաւ հարուստներին, որոնք ցրված են Ռուսաստանի քաղաքներում—Բաքւում, Թիֆլիսում, Երևանում, Մոսկվայում, Ռոստովում, Նոր-Նախիջևանում, Ցարիցինում, Եկատերինոդարում և այլն և այլն—որ յիշեն իրանց ուսումնածարաւ հայրենիքը և աշխատեն իրանց նիւթական առատաբուխ նուիրաբերութեամբ կանգնեցնել այդ լուսոյ, կրթութեան տաճարը, որի ճառագայթները կը թափանցեն ամբողջ Ատրպատականի մտաւոր խաւար անկիւնները, վերածնելով, վերակենդանացնելով մեր ամայի անդաստանը։ Այդպիսի մի տաճարի բացակայութեան պատճառով, Ատրպատականը առնուազը 100 աշակերտ կունենայ Ռուսաստանի թեմական և այլ միջնակարգ դպրոցներում. եթէ իւրաքանչիւր աշակերտին հաշւենք միջին թւով ամենապակասը ծախք 200 րուբլի, գումարը կը լինի 20,000 րուբլի։ Կենտրոնական դպրոցի գոյութեամբ՝ այլ ևս Ատրպատականի ժողովուրդը ազատված կը լինի և այդ ծախքից, հաւատացած լինելով որ յիշեալ դպրոցը պէտք եղած պաշարը կը տայ իր զաւակներին։ Ամենայարմար ժամանակն է այս մասին լուրջ մտածելու, նամանաւանդ որ մեր ներկայ թեմակալը այդպիսի մի կրթական գործի ձեռնարկութեան ամենալուրջ ձեռնհասութիւնն ունի։ Վերջացնելով մեր նամակը՝ կրկին անգամ կոչ ենք անում մեր Ռուսաստանում ապրող պարսկաստանցի հայ հարուստներին, որ իրանց բազմազբաղ հոգածութեանց մասին մի քանի վայրկեան էլ նուիրեն իրանց հայրենակիցների մտաւոր վերածնութեան գործին զօրավիգն հանդիսանալու։ Հաւատացած ենք, որ Պարսկաստանում գտնվող մի քանի հարուստները, մանաւորապէս գերաստիճան Իսկէնդեր խան Գորոյեանը ևս անմասն չի մնայ այդ մեծ գործից, իր նուիրաբերութեամբ, խորհուրդներով և բարոյական աջակցութեամբ։ Այդ կրթական տաճարի շնորհիւ կախտահանվի մեր մթնոլորտը, և պարսկահայը կարող է որպէս մրցակից [illegible] գոյութիւն ունենալ գոյութեան կռւի հրապարակում, ևս առաւել ներկայումս, երբ ամէն օր տեսնում ենք եւրոպական հոսանքի արշաւանքը դէպի մեր կողմերը, որոնց դիմաց ներկայ դրութեամբ մենք տեղի կը տանք, ինչպէս որ տաւել ենք անցեալում, մեր փառաւոր վաճառականութիւնից փշրանքներ միայն թողնելով ներկային։ Գոյութեան պայքարի համար կրթութիւն է պէտք... «Ժամ է, ժամանակ ոտքի կանգնելու»։ Սպասում ենք կենսաշունչ արձագանքին մեր մտաւոր և հեռաւոր հարուստ բարերարների։

Իբօ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՒՐՔԻԱ

Արաբների ապստամբութիւնը.—Րէյտէրի գործակալութեանը հաղորդում են Աբուշիրից (Պարսկական ծոցում), որ Ամարի շրջանի արաբ ցեղերի մէջն ապստամբութիւն ծագեց։ Անգլիական «Blosse Lynch» շոգենաւը, որ լողում էր Տիգրիս գետով Բաղդադից, թիւրքական բանակի մօտ, որ գտնվում էր Ամարա քաղաքի մօտ, հրացանաձգութեան ենթարկվեց ապստամբների կողմից։ Երկու ճանապարհորդ սպանվեցին, մի քանիսը վիրաւորվեցին։ Թիւրքական կառավարչական շոգենաւը, որ կանգնած էր բանակի մօտ, ուղեկցում էր անգլիական շոգենաւին գետի այդ մասում և պատասխանում էր արաբների կրակին։

Րէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ անգլիական արտաքին գործերի մինիստրութեան մէջ Կ. Պօլսի բրիտանական դեսպանից ստացված տեղեկութիւնների համեմատ, արաբները, յարձակման ժամանակ, սպանել են երեք ճանապարհորդ և մի նաւաստի։ Բրիտանական կառավարութիւնը պահանջեց Թիւրքիայից յանցաւորներին և պատասխան ստացաւ, որ Թիւրքիան ամեն միջոցներ ձեռք կառնի շոգենաւերի երթևեկութիւնը ապահովելու համար Տիգրիսի վրա, և որ յանցաւորները կը պատժվեն։

Բարոն Էրենտալի յայտարարութիւնը.—Բարոն Էրէնտալը յայտնեց հետևեալը «Matin» լրագրի թղթակցին. «Ներկայումս պետութիւնների, որոնց թւում և Անգլիայի, գլխաւոր հոգսը մակեդոնական հարցում եւրոպական կօնցէրտի միութեան պահպանութիւնն է, որպէսզի Թիւրքիային հնարաւորութիւն չը տրվի օգուտ քաղել տարաձայնութիւններից։ Կատարեալ համաձայնութիւն է կայացած գլխաւոր կէտերի վերաբերմամբ։ Ուրեմն մնում է, որ Թիւրքիան ընդունի եւրոպական առաջարկութիւնները»։

Բռնութիւնների յանցաւորները Վանում.—Հիւպատոսական զեկուցումների համաձայն, Վանում հայերի վրա գործ դրված բռնութիւններին մասնակցում էին մասամբ ակտիվ կերպով և մասամբ էլ որպէս դրդողներ բողոքարկու դատարանի նախագահը, պօստի դիրեկտորը և 2 ժանդարմական օֆիցեր։

ԳԵՐՄԱՆԻԱ

Դաշնակցութիւնների եւ ժողովների վերաբերեալ օրինագծի առիթով.—Րէյխստագն ընդունեց 200 ձայնի մեծամասնութեամբ 179 ի դէմ օրինագծի 7-դ կէտը ժողովների և դաշնակցութիւնների մասին, որ վերաբերում է լեզուի հարցին։ Վիճաբանութիւնները շատ տաք էին։

Րէյխստագն ընդունեց 200 ձայնի մեծամասնութեամբ 161-ի դէմ օրինագծի 10-դ պարագրաֆը ժողովների և դաշնակցութիւնների մասին, որը արգելում է 18 տարեկան հասակին չը հասած անձանց լինել անդամ քաղաքական դաշնակցութիւնների և մասնակցել հրապարակական ժողովներին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

17 ապրիլ

ՌԵՎԷԼ։ Ժամանեց բալտիական նաւատորմիղը ծովակալ Էբերգարդի հրամանատարութեամբ։ Նաւատորմիղի կազմի մէջ մտնում են «Ցեսարեվիչ» և «Սլավա» զրահանաւերը և «Բօգատիր» ականանաւը։ Ականի բաժինը, ծովակալ Էսսէնի հրամանատարութեամբ, բաղկացած 18 նաւերից, շվէդական թագաւորին կը հանդիպէ ծովում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրի մինիստրութիւնը հաւանութիւն տուեց՝ բաւարարութիւն տալու առևտրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչների համագումարների խորհրդի միջնորդութեան, որ բոլոր երկաթուղային կայարաններում ընդունվեն «կօդով» կոչված հեռագիրները։

Արտաքին

16 ապրիլ

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Րուզվելտը դիմեց կօնգրէսին մի նամակով, որով վերստին պնդում է դաշնակից կառավարութեան լիազօրութիւնները ընդլայնելու մասին մի օրէնք հրատարակելու վրա։

Սենատը երկրորդ ընթերցումով կրկին մերժեց չորս զրահանաւեր կառուցանելու նախագիծը։

ՊԱԼԵՐՄՕ։ Բացվեց պօլիտեխնիստների միջազգային կօնգրէսը։

ՊՕՐՏՍՄՈՒՏ։ «Բրիտանիա» զրահանաւի վրա կաթսաներից մէկը պայթեց։ Չորս հոգի վիրաւորված են ծանր կերպով, մէկը՝ թեթև։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Վիլհէլմ պրինցը ապրիլ 15-ի երեկոյեան մեկնեց Պետերբուրգ։

ՎԻԷՆՆԱ։ Համալսարանի պրօֆէսօր գաղտնի խորհրդական Բօրրժինսկին նշանակված է Գալիցիայի փոխարքայ. գ. խկոմս Բադէնին՝ Գալիցիայի լանդմարշալ։

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ։ Անգլիական թագաւորը և թագուհին Վիկտորիա պրինցուհու հետ միասին ապրիլի 15-ի առաւօտեան ժամանեցին տեղս։ Երեկոյեան կայացաւ պաշտօնական ճաշկերոյթ, որի ժամանակ Գաակօն և Էդուարդ թագաւորները բարեկամական և սրտագին ճառեր փոխանակեցին։

ԲԵՐԼԻՆ։ Վօլֆի գործակալութեանը Շանխայից հեռագրում են, որ հարաւ-մանջուրական երկաթուղագծի նախագահ Գոտօ մեկնեց Պետերբուրգ։

17 ապրիլ

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ «Պեստէր Լլօյդում» հրատարակված է, որ Վիէննայից տեղեկութիւն է ստացվել, որ աւստրօ-ունգարական և սերբիական մամուլները պօլեմիկա են մղում Բօսնիայում և Հերցէգովինայում պանսերբական ագիտացիայի մասին։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Ցերեկվայ ժամը 1 և 30 րօպէին Րեվէլ դիմեց թագաւորական էսկադրան։ Թագաւորը, պրինց Կարլը և պրինցուհի Իգեբօրգան գտնվում են «Օսկար II» զրահանաւի վրա։ Էսկադրայի հրամանատարն է կապիտան Դիրսէն։

ԿԻԼ։ «Էլզաս» նաւում պայթում առաջացաւ։ Երկու հոգի սպանված են, չորսը ծանր վիրաւորված, երկուսը՝ թեթև։

ՊԱՐԻԶ։ Հավասի գործակալութեան հեռագրում են Ալժիրից, որ ապրիլի 15-ին իտալական հիւպատոսարանում մի իտալացի ընդունելութեան ժամանակ ատրճանակով վիրաւորել է փոխ-հիւպատոսին գլխից։ Մահափորձողը ծանր կերպով վիրաւորում է նաև հիւպատոսարանի պաշտօնեային, որ աշխատել է օգնութիւն ցոյց տալ։

ԼՕՆԴՕՆ։ Առաջին մինիստր Ասկվիտը յայտնեց, որ նախահաշիւը պալատի քննութեան կը ներկայացվի ապրիլի 24-ին։

Ալանդեան կղզիների մասին ուղղված հարցապնդմանը Գրէյը յայտնեց, որ տեղեկութիւններ չունէ, որ իբր այդ հարցի առիթով բանակցութիւններ են վարվում. որքան յայտնի է նրան, կղզիների վերաբերութեամբ կապած պայմանագրերի վերացման հարցը ներկայումս բնաւ չէ քննվում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլոլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—33

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-ի
ՓՈՔՐՈԳԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ
գրքոյկը (սակաւաթիւ) 64 էջ, 15 կօպէկ. Միւս 16 գրքերի հետ վաճառվում է գրախանութներում։
(օ. մ) 10—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտնում է ի գիտութիւն գիւղատնտեսների, որ ներկայ ապրիլի 16-ից ընկերութեան կից կազմակերպված է բիւրօ նիւթեր և գործիքներ ծախելու նպատակով մրգատու ծառերի և վազերի հիւանդութիւնները բժշկելու համար։
Բժշկական միջոցների լաւութեան վրա հսկում է մի յանձնաժողով, որի մէջ մտնում են ընկերութեան խորհրդի անդամներ Ա. Ս. Փիրալեան, Ս. Ն. Տիմօֆէեվ և քաղաքային լաբօրատօրիայի կառավարիչ Գ. Գ. Ալիբէկօվ։ Վաճառքը լինում է ամեն օր մինչև ցերեկվայ 3 ժամը, բացի տօն օրերից։ Օտարաքաղաքացիներին խնդրում են դիմել Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան դիւանատունը։
3—1

1908 թ. ապրիլին լոյս կը տեսնի
Աստրախանում
„ԼՐԱԲԵՐ"
շաբաթաթերթը
Բաժանորդագինն է Աստրախանում տարեկան 3 ր., Աստրախանից դուրս 4 րուբլի։
Հասցէն՝ Астрахань, редакція газеты „ЛРАБЕРЪ".
3—2

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ»
գրախանութում տօների առիթով վաճառվում են հետևեալ մանկական պատկերազարդ և փառակազմ գրքերը.

Կարէնն ու Մանէնը	40 կ.
Եօթն ապուռ	40 կ.
Անդարդ Հանէսը	40 կ.
Պատիկ ու ճատիկ	40 կ.
Թումանեան Ց. Գիքորը	20 կ.
Էբերս. Փարաւոնի աղջիկը փառակազմ	1 ր. 55 կ.
Ամիչիս. Սիրտ	1 ր. 75 կ.
Անդերսընի հէքիաթները	1 ր. 25 կ.
Աղայեանց. Արութին և Մանուէլ	1 ր. 25 կ.
Ծննենսկայա. Դասընկերներ	1 ր. 25 կ.
Բէրնէտ. Փոքրիկ Լօրդի պատմութիւնը	2 ր. »
Տուէն. Իշխանն ու աղքատը	1 ր. 75 կ.

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ" Г. И. Галустяну.
3—2

„Вѣстникъ Фотографіи"
ԱՄՍԱԳԻՐ
Ռուսական լուսանկարչական ընկերութեան հրատարակութիւնը Մոսկվայում։ Բաժանորդագինն է տարեկան 4 ր., երեք ամսվանը 1 ր. ճանապարհածախսով։
Москва, Кузнецкій мостъ, пассажъ Джамгаровыхъ.
Լոյս տեսաւ և ուղարկվեց № 4-ը
Հրատարակութեան պատկերազարդ ծանուցումը ուղարկվում է ՁՐԻ։
Ամսագրի № 1-ը—25 կոպ. (պօստային մարկաներով), որը հաշւի է առնվում ստորագրութեան ժամանակ։
«Руск. Вѣд.» լրագրի 1908 թ. № 59-ի կարծիքը. «Ռ. Լ. Ը.» ձեռնարկած հրատարակութիւնը, նպատակ ունենալով տարածել հասարակութեան լայն խաւերում տեղեկութիւններ լուսանկարչութեան մասին իր բոլոր արտայայտութիւններով... չէ կարելի օգտակար չը համարել։ Հրատարակութիւնը աչքի է ընկնում իր գեղեցիկ արտաքինով. պատկերները կատարված են գեղարուեստօրէն»։
(121533) 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ցանկանալով ամառվայ ամիսներում բանալ իր արհեստանոցի ճիւղը
ԳԻՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ ՄԷԿՈՒՄ
դիմում է հասարակութեանը, խնդրելով դրամական աջակցութիւն այդ դիտաւորութիւնը իրագործելու համար։
Նպաստները հասցնել տնայնագործական ընկերութեան վարչութեան կամ «Մշակի» խմբագրութեան։
3—2

Типографія „Экономія" Авака Мугдусіакова съ С-ми. Большая Ванкская ул. № 5.